

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել կոչքը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա կոչքը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ՈՒՍՄԱՆ ՀԱՐԿԱԾԱՅԻՆ



№ 2

491.99-8
116 - 75

ՊՐԻՆՏԱԼ-ԴԱՍԱԳՐԻԿ

1992

18 MAY 2010

Арм. 491.99-8
3-5150 1/2 ու - 25

Պրոկտորներ բոլոր յերկրների, միացե՛ք

Г.П.Б. в Лнгр. Ц
О.Э. 1932 г.
АКТ № 228

ՌԻՍՄԱՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ

807

ԺՈՒՐՆԱԼ-ԴԱՍԱԳԻՐՔ
ՀՅՈՒՍ. ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ I ԱՍՏ.
ԴՊՐՈՑՆԵՐԻ III—V ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐ
ԼՈՒՍԲԱԺՆԻ ՅԵՎ «ՀՅՈՒՍԻՍ. ԿՈՎԿԱՍ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՏՈՐԻ



ИИВ. № 18770

№ 2.



ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
1932 թ ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

26 AUG 2013

**Ո Ւ Ս Մ Ա Ն
Հ Ա Ր Վ Ա Շ Ա Յ Ի Ն**



40611-63



КНИГОИЗДАТЕЛЬСТВО
„СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ՉՈՐՐՈՐԴ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Մեր լայնածավալ Խորհրդային Միության բանվոր դասակարգը, հենվելով կոլտնտեսականների վրա ու նրանց հետ միասին, կոմունիստական կուսակցության գլխավորությամբ վերջ է տալիս հասարակության դասակարգային կառուցվածքին:

Մեր Խորհրդային սոցիալիստական ստատեությունը զարգացնում ենք գիտության և տեխնիկայի նորագույն տվյալներով:

Մենք շինում ենք մեր սոցիալիստական գործարանները նորագույն մեքենաներով և զագոյահներով, կառուցում ենք առաջնակարգ ֆաբրիկաներ, ելեկտրոկայաններ:

Մենք կոլտնտեսություններն ու խորհրդային ստատեությունները անտեսապես և կազմակերպչորեն ամրապնդում ենք: Միջոցներ ենք ձեռք առնում աշխատանքը լավագույն կերպով կազմակերպելու: Գյուղատնտեսությունը զինում ենք տրակտորներով ու կոմբայններով, բարձրացնում ենք բերքատվությունը, լայնացնում ենք տեխնիկական բույսերի ցանքաստարածությունը, անբերրի հողերին ստիպում ենք բերք տալ, զարգացնում ենք անասնապահությունը և այլն:

Հնգամյա պլանը բանվոր դասակարգի լենինյան քաղաքականության իրականացման, հետևողական սոցիալիզմ կառուցելու պլանն է: Այդ նշանակում է, վոր մենք արագ տեմպերով դուրս ենք հանում կապիտալիստական մնացորդները և ստեղծում ենք անդասակարգ սոցիալիստական հասարակակարգ:

17-րդ կուսակցական կոնֆերանսը նշեց այն խոշոր նվաճումները, վոր մենք ունեցանք 5-ամյա ծրագիրը կյանքում կիրառելու գործում: Կոնֆերանսն արձանագրել է, վոր այդ նվաճումները հնարավոր են դարձել շնորհիվ համառ դասակարգային կռվի, վորը մղել է աշխատավոր մասսան Լենինյան

Կենսակոմիտեի և ընկ. Ստալինի գլխավորութեամբ, կուսակցական գլխավոր գիծը կյանքում կիրառելու համար:

Սոցիալիստական շինարարութեան ընթացումն և դասակարգային սուր կռիվն պայմաններում: Կուսակցութեանը, ջախջախելով հակահեղափոխական սորոցկիզմն ու ալ ու «ձախ» սպորտոմենիստներին, վորոնք դասակարգային թշնամու գործակախներն են և վորոնք ամեն կերպ աշխատում են կասեցնել մեր հաղթական յերթը՝ անշեղ ղեկավարում և սոցիալիզմ կառուցելու գործը:

Այն խոշոր նվաճումները, վոր մենք ձեռք բերինք առաջին հնգամյակի անցած յերեք տարվա ընթացքում, ավելի ևս պարտավորեցնում են մեզ ել ավելի լարել մեր ուժերը, վորպեսզի չորրորդ, ավարտական տարվա պլանները կատարենք և գերակատարենք:

Առաջին հնգամյակի չորրորդ, ավարտական տարում, 1932 թվին, նախատեսնված է ընդհանուր արտադրանք 37,5 միլիարդ ուրբլու, ինքնարժեքի իջեցումը՝ 7⁰/₀, արտադրողականութեան բարձրացումը՝ 22⁰/₀: Ամբողջ արդյունաբերութեան և շինարարութեան մեջ բանվորների թիվը պիտի աճի 1,200 հազարով:

Աշխատավարձն արդյունաբերութեան մեջ աշխատող բանվորներին համար պիտի աճի 11⁰/₀: Իսկ շինարարութեան մեջ աշխատող բանվորների համար՝ 5,6⁰/₀:

Կապիտալ շինարարութեան մեջ ներդրումները կազմելու յեն 12 միլիարդ ուրբլի, վորից ծանր արդյունաբերութեան համար ծախսվելու յե 9,2 միլիարդ ուրբլի: Այդ խոշոր ծրագիրն իրագործելու համար հարկավոր է վորակային և քանակային ցուցանիշները լիովին կատարել:

1932 թվի ժողովրդական տնտեսութեան պլանի իրագործման հիմնական խնդիրն է լիովին կատարել սև մետաղի արդյունաբերութեան ծրագիրը:

Առանձին ուշադրութեան է դարձվում, վոր սև մետալուրգիան հետագայում հետ չմնա ժողովրդական տնտեսութեան ել ավելի աճող պահանջներից:

Յերկրորդ հիմնական խնդիրը, վոր դրված է մեր առաջ, դա քարածխի և կոքսի արտադրութեանն է, վորը պիտի ապահովի մեր դոմենայան վառարանները, գործարաններն ու յերկաթուղային ճանապարհները վորակավոր վառելանյութով:

Վորպեսզի կարողանանք ծրագիրն իրագործել, կուսակցութեանսը վորոշել է հանքերի բոլոր պրոցեսները մեքենայացնել, առաջին հերթին՝ ձեռքի ծանր աշխատանքները:

Մեր նպատակն է մեքենայացման միջոցով բարձրացնել աշխատանքի արտադրողականութեանը և ազատել բանվորին ծանր ֆիզիկական աշխատանքներից:

Կուսակցութեանսը պարտավորեցնում է տրանսպորտին լիովին ապահովել ծանր արդյունաբերութեան կարիքները՝ ժամանակին հասցնելով վառելիք և հումուլիք:

Առանձին ուշադրութեան պետք է դարձվի բանվորների կուլտուրական և կենցաղային դրութեանն ավելի ևս լավացնելու վրա:

Յերրորդ հիմնական խնդիրը՝ դա մեքենաշինարարութեանն է, վորը պիտի տա մեզ մեր, խորհրդային մեքենաներ և ազատի մեզ մեքենա ներմուծելուց:

Այդ նպատակով առանձնապես պետք է արագացնել Ուրալի, Կրամատորսկու ծանր մեքենաշինարարական գործարաններին, Միբիբի գործարանին, Լուգանսկու պարավոզայինարարական, վագոնայինարարական գործարանների շինարարութեան ավարտումը:

Յերկրի ինդուստրացման նվաճումները, գյուղատնտեսութեան վերակառուցումը, նոր սոցիալիստական քաղաքների և նոր արդյունաբերական կենտրոնների աճը, Միութեան աշխատավոր դասի տնտեսական և կուլտուրական մակարդակի արագ զարգացումն ավելի բարձր պահանջներ են դնում ժողտնտեսութեան բոլոր ճյուղերի առաջ:

Կուսակցութեանսը պարտավորեցնում է ծանր ու թեթև արդյունաբերութեան ժողկոմատներին լայնացնել աշխատավորութեան որեց որ աճող կուլտուրական և կենցաղային կարիքները բավարարող արդյունաբերական ճյուղերը:

Ժողովրդական տնտեսութեան ծրագրի իրագործումը և առաջին հերթին ծանր արդյունաբերութեանն ապահովելու համար պետք է ավելի ուշադրութեան դարձնենք էլեկտրոֆիկացիայի վրա:

1932 թվի ծրագրով նախատեսնված է ուժեղ թոխք էլեկտրոֆիկացիայի ապարիզում:

Գունավոր մետաղի և քիմիական արդյունաբերութեանը զարգացնելու վրա կուսակցութեանսը բոլորի ուշադրութեանն է գրավում. պետք է արագացնել այդ ճյուղերի շինարարութեանը, իսկ գործող գործարանները լիովին պիտի տիրապետեն արտադրական պրոցեսին:

Հիմնական խնդիրներից մեկն է նաև թեթև արդյունաբերութեան արագ զարգացումը: Կոնֆերանսը վորոշել է մսի

կոմբինատներ կազմակերպել, կոնսերվի և շաքարի նոր գործարաններ կառուցել, տեկստիլի նոր կոմբինատներ կազմակերպել:

Վորպեսզի իրագործենք այն խնդիրները, վոր դրված են մեր առաջ կոմունիստական կուսակցութեան կողմից, պետք է յարենք մեր ամբողջ ուշիւքը և ընկ. Ստալինի վեց պայմանները համառօրեն կիրառելով՝ կատարենք և գերակատարենք չորրորդ, ավարտական տարվա ցուցանիշները:

Մեր ծրագրի իրականացումը կախված է նաև նրանից, թե ինչ չափով կարող ենք մեքենայացման յենթարկել մեր արդյունաբերութիւնը և առաջին հերթին ծանր արդյունաբերութիւնը:

Շատ կարևոր տեղ է բռնում նաև այն, թե ինչ աստիճանով ենք մոբիլիզացիայի յենթարկել մեր ներքին միջոցները:

Պետք է ավելի խնամքով վերաբերվենք այն ամենին, ինչ վոր ունենք:

Մեր տեխնիկական վերաշինումը, վորը բոլշևիկյան տեմպերով առաջ է գնում, պահանջում է նոր և նոր կադրեր, — կարմիր մասնագետներ, վորոնք ընդունակ լինեն բանվոր դասակարգի ղեկավարութեան տակ, կոմունիստական կուսակցութեան գլխավորութեամբ ղեկավարել մեր արդյունաբերութեան տեխնիկական զինավորումը:

Մասնագետները նվիրված ու յեռանդուն աշխատանքով պետք է մասնակցեն անդասակարգ հասարակակարգ ստեղծելու գործին:

Չորրորդ, ավարտական տարվա ծրագիրը կատարել և գերակատարելն էլ ավելի մեծ նշանակութիւն է ստանում, յեթե մենք ի նկատի առնենք այն, վոր միջազգային բուրժուազիան և նրա պնակալեզ սոցիալ-ֆաշիստներն ամեն կերպ աշխատում են մեզ վրա հարձակում գործել և կասեցնել մեր շինարարութեան թափը:

Մեր նպատակն է՝ սոցմրցման և հարվածայնութեան հիման վրա կատարել և գերակատարել չորրորդ, ավարտական տարվա ծրագիրը:

ԱՇԽԱՏԱՆՔ.—

1) Գրեք, ինչ աշխատանք է տարվում ձեր ուսումնական հաստատութեան մէջ: Գրեք ձեր ուսումնական սոց. շինարարական ինչ գլխավոր աշխատանքներ են տարվում:

2) ԽՍՀՄ-ի հնգամյա զարգացման քարտեզի վրա դտեք մեր արդյունաբերական նոր կենտրոնները:

3) Պարզեք, ինչ է արվում ձեզ մոտ պլանները կատարելու և գերակատարելու համար:

ԹՎԵՐԸ ԽՈՍՈՒՄ ԵՆ

Թվերը անշարժ ու մեռած չեն: Նրանք հետաքրքիր են, շարժուն ու խոսող: Թվերը համր ու չոր չեն, ունեն լավ ու ժիր լեզու, աշխուժ են, լավ ընկեր են և շատ ու շատ նորութիւններ են պատմում: Մտերմանանք նրանց հետ, ուշադիր լսենք նրանց պատմածները:

Պատմութիւններ շատ ենք լսել: Շատերն են պատմել:

Տատը պատմում էր վիշապների մասին, վորոնք տասնյակ մարդ են կուլ տալիս, ծովը ցամաքեցնում են և իբր թե «սուրբ Գեորգը» կամ թագավորի կրտսեր վորդին նրանց դեմ կռվում են ու հաղթում: Տատը ուշ գիշերներին պատմում էր սատանաների, աստծո, սրբերի, Քրիստոսի հարութեան և այլ առասպելների մասին:

Մենք վախից դողում էյինք, յերազի մեջ նրանց էյինք տեսնում ու սարսափահար վեր թռչում:

Այժմ մենք գիտենք, վոր այդ բոլորը սուտ է, վոր սատը իր անգրագիտութեան, տգիտութեան պատճառով էր այդ անում. իսկ նա անգրագետ էր մնացել թագավորի, կարվածատերերի, կապիտալիստների պատճառով: Նրանք չէյին ուզում վոր աշխատավորները գրագետ լինեն, ուսում ունենան: Նրանք շատ լավ հասկանում էյին և հասկանում են, վոր բանվորներն ու աշխատավոր գյուղացիները ուսումով, գիտութեամբ զինված ավելի լավ կկռվեն իրենց դեմ: Նրանք սոցիալիզմի թշնամիներ են և սոցիալիզմի իրագործմանը խանգարելու համար ամեն ինչ անում են:

Չնայած նրանց ջանքերին, Խորհրդային Միութեան բանվորներն ու կոլտնտեսականները կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ հսկայական շինարարական աշխատանք են տանում: Մեր որբերի այդ շինարարութիւնը պատմութեան մեջ չի լաված ու չի տեսնված:



Լսենք թե ինչ են ասում թվերը:

ԵՆՆԵՐԳԵՏԻԿՍ

Գործարանների, յերկաթուղու, նավերի, սավառակների, առորյա կենսական պետքերի ու այլ կարիքների համար պետք է վառելիք—եներգիա: Վառելիք ունենալու համար մենք պետք է բնութեան հարստութիւնները մշակենք և ոգտակար կերպով գործադրենք: Իհարկե այդ հարստութիւնները հեշտութեամբ

չեն ձեռք բերվում: Պետք է հսկայական քանակի մարդկային ու մեքենայական աշխատանք կատարել և զիտուլթյան տվյալները համաձայն բազմաթիվ նոր ածխահորեր բացել, նավթի հարյուրավոր վիշկաներ շինել, կառուցել մի քանի տասնյակ հսկայուժ էլեկտրակայաններ:

Մեզ պետք է շատ անուխ, սուժ, նավթ, էլեկտրոէներգիա:



Գնեպրոշենի պլոտինի կառուցումը ավարտվել է: ՆԿԱՐՈՒՄ՝ պլոտինի մի մասը, հեռվում յերևում է կառուցվող էլեկտրակայանը



Ի՞նչ են ասում այս դիագրամները: Լավ դիտեցեք այս թվերը, սարքեր տարիների թվերը համեմատեցեք՝ իրար հետ և մեր շինարարության հսկա թափը ձեզ պարզ կերևա:

Սոցիալիստական մեր շինարարությունը շատ հրաշալիքներ ունի, այդ հրաշալիքներից մեկը էլեկտրոէներգիայի հսկա աղբյուր Գնեպրոշենն է, նա տասնյակ գործարաններին շարժիչ ուժ է տալու, լայնածավալ դաշտեր է հերկելու և քաղաք ու գյուղեր է լուսավորելու:

Ուշադիր դիտեցեք այս նկարը և պատմեցեք նրա մասին:

Տնտեսության համար անհրաժեշտ մեծաքանակ էներգիա ստանալու համար մենք ել ավելի կողտազործենք բնության հարստությունները և բնության տարերքները մեզ կենթարկենք:

ՄԵՏԱՂ՝ ՎՈՐՔԱՆ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՇԱՏ

Գործարաններ, էլեկտրակայաններ, յերկաթգծեր, կամուրջներ, մեքենաներ և հազար-հազար մանր ու խոշոր կարևոր բաներ շինելու համար պետք է մետաղ:

Մետաղի հանքերով մենք շատ հարուստ ենք: Այդ հանքերը մետաղի հումույթ են տալիս: Մետաղի հումույթը պետք է հանել գետնի տակից, վերամշակել և ստանալ յերկաթ, պողպատ, թուջ (չուգուն), մաքուր պղինձ:

Հասարակ, ձեռքի աշխատանքով բան չի ստացվի կամ թափած աշխատանքը ավելի շատ կարժենա, քան ստացվող արդյունքը: Անհրաժեշտ է բարձր տեխնիկական հնարավորություններ ունենալ և գործադրել այն: ԽՍՀՄ-ում տնտեսությունը կառուցվում է զիտուլթյան ու տեխնիկայի ամենանոր տվյալների համաձայն:

1932 թվին պիտի կառուցվեն ու գործի անցնեն՝
 Դոմենյան վառարան-հալոց—26 հատ,
 Մարտենի վառարան-հալոց—65 հատ,
 Ելեքտրական խոշոր վառարան-հալոց—7 հատ,
 Մետաղ գլանող (прокат) հաստոց—27 հատ:

Այս նոր կառուցվողները հենցի հետ միասին կտան բարձր վորակի մետաղ, վորով կը շինենք ավտո, դազգյան, տրակտոր, կոմբայն և այլ հազարավոր մեքենաներ:

Մագնիտագորսկու գործարանները մետաղ պիտի տան 2,600,000 տոնն մի տարում:

Զապոլոտիայի գործարանները պիտի տան 1,000,000 տոնն մի տարում:


Կուզնեցկու գործարանները մետաղ պիտի տան 1,000,000 տոնն մի տարում:

Մարիուպոլի գործարանը մետաղ պիտի տա 600,000 տ. մի տարում:

Ներքին Տագիլի առաջին հերթի գործարանները 300,000 տոնն մի տարում և այլն:

1932 թվին մենք պետք է ստանանք՝

Կարգացեք և մշակեցեք այս դիագրամը



Թուջ	9,000,000 տոնն
Պողպատ	10,000,000 տոնն
Գլանած (прокат) մետաղ	6,700,000 տոնն,
Պղինձ	90,000 տոնն:



1932 թվին մեր ծանր արդյունաբերությունը պիտի տա՝
 Շոգեկառք 1,300 հատ,
 Բեռնատար վագոն 50,000 հատ,
 Ավտոմոբիլ 73,000 հատ:

ՅԵՐԿԱՅՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

Մեր յերկրի սոցիալիստական շինարարության գործում խոշոր նշանակություն ունի տրանսպորտը:

Տրանսպորտը յերկրի արյունատար անոթն է: Նա գործարաններին հումուլթ հասցնող, գյուղը մեքենա տանող, արդյու-

Յերկարուղիով ապրանքի տեղափոխելու աճը 1913թ.-1931թ.



նաբերության ու գյուղատնտեսության արտադրանքը տեղափոխողն է:

Տրանսպորտի զարգացումը յերկրի զարգացման պայմաններին ու միաժամանակ այդ զարգացման ցուցանիշներին մեկն է:

Ուշագրությամբ կարգացեք այս դիագրամները: Նրանք խոսում են մեր սոցիալիստական վեոելքի և կապիտալիստական յերկրների անկման մասին:



ԱՊԱՀՈՎԵՆՔ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՈՒՄՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻՑ

1. ՉԻՆ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԸ

Կապիտալիստական յերկրներում այժմ տնտեսական սուր ճգնաժամ է: Անընդհատ քայքայվում են նրանց արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը: Փակվում են ահագին գործարաններ, ֆաբրիկաներ, հանքեր: Միլիոնավոր գործազուրկների թիվն որավուր ավելանում է: Տասնյակ միլիոնավոր գործազուրկների ու բանվորների ընտանիքները բուրժուական յերկրներում ապրում են տնտեսական ամենավատ պայմաններում:


Կապիտալիստական յերկրների ճգնաժամն ուժեղացնում է պրոլետարիատի ու աշխատավոր գյուղացիության հեղափոխական շարժումն ամբողջ աշխարհում: Չինաստանի մի շարք նահանգներում հաստատվել է խորհրդների իշխանություն, վորտեղ ավելի քան 90 միլիոն ժողովուրդ է ապրում: Չինա-

կան կարմիր բանակը, պրոլետարիատը և գյուղացիները հերոսաբար պայքարում են իրենց բուրժուազիայի և ոտար իմպերիալիստների դեմ վերջնական հաղթանակի համար:

Լեհաստանում, Գերմանիայում, Իսպանիայում տեղի յեն ունենում գործազուրկներ ու բուռն ցույցեր կապիտալիստների դեմ:

Կապիտալիստները ճգնաժամից և հեղափոխությունից ազատվելու յելք են փնտռում: Նրանք ուզում են հարցը լուծել իմպերիալիստական նոր պատերազմի միջոցով և Խորհրդային Միության վրա հարձակվելով:

Առաջին քայլն արին ճապոնացիները: Սրանից մոտ 7 ամիս առաջ ճապոնիան հարձակվեց Չինաստանի վրա: Նա զբաղեց Չինաստանի հյուսիսային մասը-Մանջուրիան, վոր սահմանակից է մեր յերկրին: Բացի այդ, ճապոնիան հարձակվեց Չինաստանի ամենախոշոր և արդյունաբերական գլխավոր քաղաք Շանհայի վրա: Չինական 19-րդ բանակը կատաղի կերպով դիմադրում էր ճապոնացիներին: Սակայն Չինաստանի բուրժուազական կառավարությունը չէր ոգնում 19-րդ բանա-



Ուսուներ ուբակոծումից հետո

կին: Նա վախենում էր, վոր Շանհայում կուվող զորքերը և Շանհայի պրոլետարիատը ճապոնացիներին հաղթելուց հետո հեղափոխություն կառաջացնեն և իշխանությունն իրենց ձեռքը կառնեն:

Շանհայում տասնյակ տարիներ առաջ հաստատվել են նաև ոտար իմպերիալիստները՝ ֆրանսիացիք, անգլիացիք, ամերի-

կացիք և այլն: Նրանք հաստատել են Շանհայում իրենց գործարանները, ունեն նույն իսկ իրենց առանձին թաղամասը սետտելմենտը: Ահա Շանհայի այդ ոտար կապիտալիստները ոգնում էին ճապոնիային, վոր նա հաղթի չինացիներին, վոր իրենք անվտանգ մնան Շանհայում և շարունակեն շահագործել չինական պրոլետարիատին:

7 ամսվա կռիվների ընթացքում ճապոնիան կարողացավ Մանջուրիան բաժանել Չինաստանից և նույնիսկ «անկախ» մանջուրական պետություն կազմեց, վոր իր ուզածի պես վարվի Մանջուրիայի հետ ու իր յերկրի տնտեսական ճգնաժամը մեղմացնի չինական պրոլետարիատի ու գյուղացիության հաշվին:

2. ՃԱՊՈՆԻԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ Ե ՄԵՐ ՎՐԱ ՀԱՐՁԱԿՎԵԼ

Բոլոր իմպերիալիստները, դրանց հետ նաև ճապոնիան գիտեն, վոր սոցիալիստական շինարարությունը շնորհիվ մեր յերկրում վերացել է գործազրկությունը, շատ մարգերում ու յերկրամասերում ավարտվել է համատարած կոլեկտիվացումը: Այս տարվա ընթացքում հիմնականում ավարտվելու յե ԽՍՀՄ-ի մնացյալ վայրերի համատարած կոլեկտիվացումը, գյուղացիությունը դուրս է գալիս դարավոր խավարից ու անկուլտուրականությունից: Վոչնչացվում են շահագործող դասակարգերի վերջին մնացորդները: Սոցիալիստական շինարարության վիթխարի նվաճումները հանգիստ չեն տալիս ճգնաժամում գազազող կապիտալիստներին: Նրանք տեսնում են, վոր իրենց յերկրների պրոլետարիատը մեր նվաճումներով ավելի յե վոզևորվում, կազմակերպվում և պատրաստվում է վերջին հարվածը հասցնելու կապիտալիստներին:

Ճապոնական զինվորականները պատրաստվում են հարձակվելու նաև Խորհրդային Միության վրա: Այդ բանն իմացվեց ճապոնական զեներալների գաղտնի գրություններից, վորոնք ընկել են մեր ձեռքը: Ճապոնացիները հույս ունեն, վոր իրենք կհարձակվեն մեր վրա արևելքից, կգրավեն հեռավոր Արևելքն ու Սիբիրը, իսկ Լեհաստանը, Ռումինիան և մեր արևմտյան սահմանի մյուս կապիտալիստական յերկրները Ֆրանսիայի դեկավարությունը կհարձակվեն արևմուտքից: Բացի այդ, ճապոնացիները, Ֆրանսիացիները և մյուս կապիտալիստները հույս են դնում ոռուսական եմիգրանտ սպիտակ զվարդիականների վրա, վորոնք ուժերը կենտրոնացնում են Ման-

ջուրիայում, իսկ արևմտյան կողմից ել Չեխոսլավիայում և հարմար առիթի յեն սպասում, վոր հարձակվեն մեր յերկրի վրա: Ճապոնացիների և մյուս իմպերիալիստների հիմնական նպատակն է տապալել խորհրդային կարգերը, ճնշել հեղափոխությունը Չինաստանում, նոր շուկաներ ձեռք բերել ու ազատվել ճգնաժամից:

3. ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Ե ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻՆ

Ազգերի Լիգան կապիտալիստական յերկրների մի կազմակերպություն է, վորի նպատակն է պաշտպանել խոշոր իմպերիալիստների տիրապետությունը գաղութներում, ճնշել հեղափոխությունները և միացնել կապիտալիստական յերկրներին՝ Խորհրդային Միության դեմ: Ճապոնիան ու Չինաստանը նույնպես Ազգերի Լիգայի անդամ են: Բայց Ազգերի Լիգան չէր մասձում իր անդամներին հաշտեցնել:

Ճապոնիան ասում էր՝ յեթե Ազգերի Լիգան խանգարի նրա նվաճումներին Չինաստանում, ինքը դուրս կգա Ազգերի Լիգայից:

Ազգերի Լիգան հանձնաժողով ուղարկեց կովի վայրը, վոր քննություն կատարի և կողմերին հաշտեցնի: Մինչ այդ ճապոնացիները Մանջուրիան ու Շանհայը գրավեցին և այժմ չինացիների հետ բանակցում են, վոր իրենց գրաված վայրերը չվերադարձնեն չինացիներին: Ազգերի Լիգայի հանձնաժողովը վոչ մի կտրուկ միջոց ձեռք չի առնում ճապոնացիներին հեռացնելու Չինաստանից: Փաստորեն թե ճապոնացիները, թե չինացիներն ամրացնում են իրենց ռազմական դիրքերը և պատրաստվում վերսկսելու պատերազմը:

4. ՄԵՆՔ ՉԵՆՔ ՈՒՉՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄ, ԲԱՅՑ ԹՈՒՅԼ ՉԵՆՔ ՏԱ ՄԵՉ ՎՐԱ ՀԱՐՁԱԿՎԵՆ

Չին-ճապոնական կռիվները մեր յերկրի հեռավոր արևելյան սահմանի մոտակայքում կարող են ամեն անգամ առիթ ծառայել մեզ վրա հարձակվելու և մեր դեմ պայքարելու: Մենք չենք ուզում պատերազմ: Մեր հիմնական նպատակն է ավարտել սոցիալիզմը մեր յերկրում: Մենք ուրիշ յերկրներ գրավելու մտադրություն չունենք: Շվեցարիայի ժնեվ քաղաքում տեղի ունեցավ Ազգերի Լիգայի «լինաթափություն» կոնֆերանսը, վորտեղ մեր արտաքին գործերի կոմիսար ընկեր

Լիտվինովն առաջարկեց բոլոր յերկրներին զինաթափվել: Կապիտալիստական յերկրների ներկայացուցիչները չընդունեցին Լիտվինովի առաջարկը: Դա նշանակում է, վոր նրանք պատրաստվում են նոր պատերազմի: Զինաթափության կոնֆերանսը կազմակերպում են կապիտալիստները, պրոլետարիատին խաբելու և սպառազինումներն ավելացնելու համար:

Զին-ճապոնական կոնֆլիկտը չեն դադարել: Նրանք առիթ են տալիս մի նոր, ավելի ահավոր իմպերիալիստական պատերազմի, քան 1914 թվի պատերազմը:

Մեր յերկիրն այդ պատերազմի ամենամեծ խոչնդոտն է հանդիսանում: Միջազգային պրոլետարիատը մեր յերկրի օրինակով դուրս կգա կապիտալիստների դեմ և կպաշտպանի իր սոցիալիստական հայրենիք Խորհրդային Միութիւնը:

Մենք պետք է ավարտենք առաջին հնգամյակը և շարունակենք սոցիալիզմի հաղթական կառուցումն յերկրորդ հնգամյակում, բայց միևնույն ժամանակ պիտի պատրաստվենք և ուժեղացնենք Կարմիր բանակի ռազմունակութիւնը, վոր պաշտպանենք մեր յերկիրը կապիտալիստների հարձակումներից:

«Ուրիշի հողից վոչ մի թիզ չենք ուզում, բայց և մեր հողից վոչ մի վերշոկ չենք զիջի վոչ վոքի» (Ստալին):

ՄԻՋԱՉԳԱՅԻՆ
ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ

Խ. Ս. Հ. Մ - Ի
ՊԱՇՏՊԱՆՆԵՆ

ԿԱՐՄԻՐ ՄԱՐՏԻԿԻ ՅԵՐԳԸ

Վոր արբուն լինես
Ու մնա արի:
Յե. Չարեհց

Ա.րիացի՛ր, ընկեր,
Սիրոյ լինի թող հուր,
Սիրոյ թող ջահ լինի
Մեր ես համբի վրա:
Քայլի դու համարձակ
Հաղթանակի համբան,
Յե՛վ սուր ավիւնդ հուր
Թող գործի անահ:

Մենք յելել ենք յելը,
Կռվով, հաղթանակով
Կառուցել ենք հաստատ
Սոցիալիզմի հիմքը:
Յե՛վ այս մեծ պայքարում
Թափով գիլ, հրեղեն
Տվել ենք կառուցման
Հանդիպական պլան:

Այժմ, հնգամյակի
մեծ, հաղթական տարում,
Մեր թեւամին բուրժույ
Լարում է նոր դավեր—
Խաղաղ ովկյանոսը
Փոքրկոս է դարձել,
Պատրաստ յեղիւր, ընկեր,
Անհաղթ ու անվեհեր:

Ա.րիացի՛ր, ընկեր,
Սիրոյ լինի թող հուր,
Սիրոյ թող ջահ լինի
Մեր ես համբի վրա:
Քայլի՛ր դու համարձակ
Հաղթանակի համբան,
Յե՛վ սուր ավիւնդ հուր
Թող գործի անահ:



ՎԵՐԱՅՆԵՆՔ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերջին ստուգումներից պարզվել է, վոր մեր դպրոցները վորոշ մասը դեռ այն բարձրության վրա չի դանվում, վորը պահանջվում է խորհրդային դպրոցից:

Շատ դպրոցներում դասերն անկանոն են ընթանում. բացակայում է ուսումնական արտադրական և հասարակական աշխատանքների պլանը, դեկավարությունը թույլ է, վորից տուժում է ընդհանուր կրթական գործը և լրիվ չի իրագործվում ուսման ծրագիրը:

Յեղել են նույնիսկ դեպքեր, յերբ դպրոցները կայուն դասացուցակ չեն ունեցել, և դասերը տարվել են ձևականորեն, առանց պլանի, առանց հետևողականության:

Շատ դպրոցներում միևնույն ակտիվ աշակերտների վրա յեն ընկնում բոլոր հասարակական ծանրաբեռնումները, վորի պատճառով նրանք զժվարանում են լրիվ կատարելու իրենց վրա առած պարտականությունները, իսկ մնացածներն առաջ չեն քաշվում և պասսիվ են մնում:

Մեր յերկրում հաղթական քայլերով առաջ է գնում կուլտուրական հեղափոխությունը: Մեր ամբողջ աշխատավորությունը կոմկուսի ղեկավարությամբ, առաջնորդվելով ընկ. Ստալինի վեց պայմաններով, իրագործում է հնգամյա պլանը չորս տարում և պատրաստվում է թեև կոխելու յերկրորդ հնգամյակը:

Մեր առաջ խոշոր խնդիր է դրված՝ վերացնել մեր հետամնացությունը և ամենակարճ ժամանակամիջոցում հասնել կապիտալիստական յերկրներին և անցնել նրանցից:

Այդ մեծ պլաններն իրագործելու համար մեզ պետք են նոր մասնագետների կադրեր, նոր գյուտարարներ, հետախույզներ, սոցիալիզմի դիտակից և կարող կառուցողներ: Խորհրդային դպրոցն այդ պատասխանատու խնդիրներում մեծ դեր ունի խաղալու. նա պետք է արդարացնի այն պահանջները, վոր դրված են նրա առաջ խորհրդային իշխանության կողմից:

Աչքի առաջ ունենալով դեռ մեր դպրոցների վորոշ մասում յեղած թերությունները, վորոնց պատճառով նրանք հետ են մնում սոցիալիստական շինարարության ընդհանուր տեմպերից, ժողկոմխորհի վորոշումից հետո լույս տեսավ լուսժողկոմ ընկ. Բուբնովի և առժողկոմ ընկ. Վլադիմիրսկու վորոշումը դպրոցական պարապմունքների կարգ ու կանոնի մասին, վորով պիտի առաջնորդվեն մեր դպրոցները, իրենց աշխատանքները կարգավորելու և վերացնելու յեղած թերությունները:

ԴԴՐՈՑԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՎ ԴԴՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ-ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՈՒՄՆԵՐԻ ՆՈՐՄԱՅԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆԸ

I ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆԸ

1. I աստ. դպրոցի աշակերտության դպրոցական պարապմունքներն սկսել առավոտյան ժամը 8^{1/2}-ից վոչ առաջ, և II աստիճանի պարապմունքները ժամը 8-ից վոչ առաջ:

I, II, III խմբերի աշակերտության համար տասնորյակում ունենալ 32 դասից վոչ ավել (45-ական ըուպե), IV խմբի համար տասնորյակում 40 դասից վոչ ավել և II աստիճանի համար՝ տասնորյակում 48 դասից վոչ ավել, ներառյալ ուսումնական և արտադրական բոլոր պարապմունքները: Դասամիջոցների ակողությունն ընդունել 10 ըուպե, իսկ մեծ դասամիջոցինը, այսինքն I աստիճանում յերկրորդ և յերրորդ դասերի միջև, II աստիճանում՝ յերրորդ և չորրորդ դասերի միջև՝ 30 ըուպե:

3. Որվա և տասնորյակի դասաբաշխումը պետք է կատարվի յերեխաների տարիքային առանձնահատկությունների համապատասխան. հեշտ և զժվար դասերն ու պարապմունքները պետք է իրար կանոնավոր հերթափոխեն:

Արդելել յերկու դասի միանվագ անցկացումը, դասամիջոցների վերացումը և զժվար դասերի և պարապմունքների կենտրոնացումը:

4. Տան համար տրվելիք աշխատանքները սահմանափակել այնպիսի ծավալով, վոր առաջին և յերկրորդ խմբերի աշակերտներն այդ առաջադրանքների վրա զբաղվեն որական 30-45 ըուպե, յերրորդ և չորրորդ խմբի աշակերտները՝ 1 ժամ և II աստիճանի աշակերտները՝ 1^{1/2}—2 ժամ:

Տան համար աշխատանք տալն աշակերտների հանգստյան օրերի նախորյակներին՝ արգելել:

5. Դպրոցների վարիչներին և համանդկոտային պարտադրել տաք նախաձաշով ապահովելու բոլոր խմբերի և հերթափոխությունների դպրոցականներին մեծ դասամիջոցի ընթացքում: Արգելել կերակրի բաժանման ձգձգումը մի քանի դասերի ընթացքում:

6. Յերկու հերթափոխությամբ աշխատող դպրոցներում I և II խմբերի պարապմունքներն ու աշխատանքները պիտի վերջանան յերեկոյան ժամի 6-ից վոչ ուշ, III և VI խմբերի-

նը՝ յերեկոյան ժամի 7-ից վոչ ուշ և II աստիճանինը՝ յերեկոյան ժամի 8-ից վոչ ուշ: Ժամը 9-ից հետո արգելել I և II աստիճանի աշակերտութեան ամեն տեսակի կոլեկտիվ պարապմունքներն ու ժողովները թե դպրոցի շէնքում և թե նրանից դուրս:

7. Իպրոցական շէնքերը պետք է լավ ոգւփոխվեն: Պահանջել աշակերտութեան ճշտութեամբ կատարելու առողջապահական տարրական կանոնները (կոշիկները սրբել, ուտելուց առաջ ձեռքերը լվալ և այլն): Ֆիզկուլտուրային պարապմունքներն ապահովել անհրաժեշտ շէնքով և դրսի հրապարակով:

Իպրոցների վարիչներին պարտավորեցնել հսկելու, վոր դպրոցական հանդերձարաններում պատշաճ կարգապահութիւն պահպանվի:

8. Յերկու և ավելի հերթափոխութեամբ պարապող դպրոցների վարիչները պետք է այնպիսի կարգ ու կանոն սահմանեն, վոր I աստիճանի փոքրահասակ յերեխաների բոլոր խմբերը պարապեն առաջին հերթափոխին:

II. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1. Յուրաքանչյուր դպրոցական (տվյալ ամեն մի ժամանակամիջոցում) կարող է ունենալ վոչ ավել, քան մի ընտրովի (մշտական) ծանրաբեռնում դպրոցում կամ պիտներվաշտում:

Ծանոթութիւն:—Բոլոր միջանկյալ կարճատե առաջադրութիւնները վերածանրաբեռնումից խուսափելու համար, նույնպես պիտի կարգավորվեն: Յուրաքանչյուր առանձին դեպքում նրանք կարող են թուլատրվել միայն դպրոցական և պիտներական մանկական կազմակերպութիւնների միջև կայացած համաձայնութեամբ և դպրոցների վարիչների հաստատութեամբ:

2. Ամեն տեսակի հասարակական աշխատանքների ընդհանուր ծանրաբեռնումը (գանազան տեսակ հասարակական առաջադրանքների կատարումը, ժողովներ, նիստեր, պիտներական հավաքներ) դպրոցում, պիտներ վաշտում, ձեռնարկութիւններում և հասարակական հիմնարկներում ու կազմակերպութիւններում մի տասնորյակում չպետք է ավելի լինեն, քան՝

8—10 տարեկան (I և II խմբերի) յերեխաների համար— 4 ժամ, 11—13 տարեկան (III և VI խմբերի) յերեխաների համար— 6 ժամ, 14—16 տարեկանների համար (V, VI և VII խմբի)— 8 ժամ:

3. Հասարակական աշխատանքի տևողութիւնը մի որում չպետք է տևի ավելի քան՝

8—10 տարեկան (I և II խմբերի) յերեխաների համար— 1 ժամ, 11—13 տարեկանների համար (III և V խմբերի)— 1½ ժամ, 14—16 տարեկանների համար (V, VI և VII խմբերի)— 2 ժամ:

4. Նպատակահարմար է դպրոցական յուրաքանչյուր խմբի հասարակական աշխատանքներին հատկացնել վորոշ որեր (որինակ՝ տասնորյակում 4 որ, կատարելով նախորդ կետի մի որվա ծանրաբեռնման առավելագույն չափը) և կազմել յերեխաների ամենորյա ընդհանուր ծանրաբեռնումը հաշվի առնող կայուն ցուցակ:

5. Յերեխաների ժողովների և նիստերի քանակը պետք է հասցնել նվազագույն չափի, վորպեսզի յուրաքանչյուր աշակերտ մի տասնորյակի ընթացքում մասնակցի վոչ ավել, քան յերկու ժողովի: Յերեխաների ժողովները պիտի կրեն հետևյալ բնույթը,— ժողովները պիտի տարվեն յերեխաներին մատչելի և հետաքրքիր կենդանի գրույցների ձևով և առաջադրած հարցերի քննարկութիւնը՝ բոլոր ներկա գտնվողների մասնակցութեամբ: Յերեխաների յուրաքանչյուր ժողովը, ժամանակի տեսակետից, պետք է խիստ կարգավորել, վորպեսզի նա տևի վոչ ավել, քան՝

8—9 տար. յերեխաների համար (I խ.)— 30 րոպե.

10—11 » » » (II խ.)— 1 ժամ.

12—13 » » » (III խ.)— 1½ ժամ.

14—16 » » » (V, VI և VII խ.)— 2 ժ.

6. Յերեխաների հասարակական աշխատանքները ռացիոնալացնելու նպատակով, անհրաժեշտ է՝

ա) Բազմաթիվ քաղաքականպես կարևոր և հարկավոր խնդիրներից յերեխաների հասարակական աշխատանքի համար ընտրել միայն նրանք, վորոնք ունեն ուսումնա-դաստիարակչական արժեք և համապատասխանում են տարիքային հարավորութիւններին և հետաքրքրութեանը:

բ) Արգելել յերեխաներին տալու նրանց առողջութեան և որդանիզմի զարգացման համար վնաստար ծանրաբեռնումներ, ալ և վարակիչ հիվանդութիւն առաջ բերելու ընդունակ աշխատանքներ (առբաժնի բժշկի ցուցմունքով):

գ) Աշխատանքները բաշխելիս ուշադրութեան առնել յերեխայի տարիքը, հետաքրքրութիւնը, անհատական ընդունակութիւնը, առողջութիւնը և ուսման հառաջադիմութիւնը:

դ) Նվազագույն չափի հասցնել մեքենայորեն կատարում պահանջող և դաստիարակչական ու կրթական չնչին նշանակութիւն ունեցող ծանրաբեռնումները (ծանուցագրեր գրել ու բաժանելը, թերթեր ցրելը, խմբակներին անդամագրելը և այլն)։

III. ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ԿԵՆՅԱՂՆ ՈՒ ՀԱՆԳԻՍՏԸ

1 Կազմելով յերեխաների դպրոցական և արտադպրոցական աշխատանքների կարգ ու կանոնը, նկատի ունենալ, Վոբ յերեխաների քունը պիտի տևի՝ 8—10 տար. յերեխաներինը— 10—11 ժամից վոչ պակաս, 12—16 տարեկաններինը՝ 9—10 ժամից վոչ պակաս։

2. Դպրոցական, ակմբային և հասարակական աշխատանքների տևողութիւնը վորոշելիս, անհրաժեշտ է ամեն տեսակ պարտադիր ծանրաբեռնումներից ազատ ժամանակ թողնել խաղերի, սպորտի, զվարճութիւնների, ընթերցանութիւն և այլ զբաղմունքների համար։

3. Հասցնել յերեխաների տնային աշխատանքներով ծանրաբեռնումը նվազագույն չափի, բացատրական աշխատանք տանելով ծնողների հետ, թեթևացնելով աշակերտների աշխատանքը թե դպրոցում և թե պիտներ կազմակերպութեան մեջ, համապատասխան տնային ծանրաբեռնման։ Դպրոցը պիտի պայքարի յերեխաների տնային ծանրաբեռնումներում յեղած խեղաթյուրումների դեմ։ Հասարակական կազմակերպութիւնների (ոժանդակիչ խորհրդներ, արհմիութիւնների, մանկան բարեկամի բջջի, կուսնտեսութիւնների վարչութիւնների, ոժկոմի, պիտներ— կազմակերպութիւնների վերահսկողութիւն հաստատել յերեխաների տնային ամբողջ ծանրաբեռնումների վրա, պայքար ծավալելով գոյութիւն ունեցող խեղաթյուրումների դեմ։

4. Հանգստյան օրերին խստիվ արգելվում են ամեն տեսակ պարապմունքներ, նիստեր, հիմնարկութիւնների և թանգարանների այցելութիւնն յոթնամյակների բոլոր խմբերի աշակերտութեան կողմից։ Առաջարկվում է հանգստյան օրերին կատարել միայն զբոսանքներ և զանազան ձևի սպորտ (սահնակներով, չմուշկներով և այլն)։

ԱՇԽԱՏԱՆՔ

1) Ուսուցչի ղեկավարութեամբ մշակեցեք այս կարգադրութիւնը։

2) Պարզեք, թե ինչ է արված ձեր դասարանում, դպրոցում, ծնողների մեջ այս կարգադրութիւնը լրիվ իրագործելու համար։

3) Մշակեցեք թե ինչ պիտի անեք դուք։

4) «ՈՒՍՄԱՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ»—ին գրեք, թե ինչ թերութիւններ եք ունեցել (կամ ունեք) և ինչ է արված այդ թերութիւնները վերացնելու համար։

ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ, Լ Ի Ն Ե Ն Բ
ՈՒՍՄԱՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԵՐ

ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ

Մայիսի մեկը—համաշխարհային աշխատավորութեան տոնն է։

Ավելի քան 40 տարի սրանից առաջ ամբողջ աշխարհի բանվորների ներկայացուցիչները հավաքվեցին Փարիզ բաղաքում և հաստատեցին իրենց աշխատանքի տոնը—բոլոր իրկրների բանվորների ազատագրման համար պայքարի միացման տոնը։

Այն ժամանակից բոլոր յերկրների բանվորներն այդ օրը թողնում են աշխատանքը ֆաբրիկներում ու գործարաններում։ Կարմիր դրոշակներով նրանք փողոց են դուրս գալիս, պահանջելով բարեկամելու իրենց աշխատանքի պայմանները։ Նրանք յերգում են ազատութեան համար պայքարի և իրենց իրավունքների յերգերը։ Դրանով նրանք ասում են կապիտալիստներին՝

—Ուշժը մեր ձեռքին է։ Ուշժն աշխատանքի և ամբողջ աշխարհի բանվորների միութեան մեջ է։


—Պոլեսարներ բոլոր յերկրների, միացե՛ք։

Բոլոր յերկրներում, ուր իշխանութեան գլուխն են կանգնած կապիտալիստները, կառավարութիւնն արգելում է բանվորներին տոնելու Մայիսի 1-ը։

Առաջվա ժամանակները, թագավորի օրով, մեզ մոտ նույնպէս անգլխաբար հետապնդում էին այն բանվորներին, վորոնք

տոնում էյին Մայիսի մեկը: Նրանց ցրում էյին մտրակներով և զենքերով, իսկ առաջնորդներին՝ բանտերը նետում:

Սյժմ մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, յերկրի տերն են իրենք, աշխատավորները: Նրանք ձեռք են բերել բոլոր իրավունքները: Նրանք ուրախ սրտով են դուրս գալիս տոնելու իրենց պրոլետարական տոնը:



Կապիտալիստները ցրում են մայիսիսկյան դեմո նստրացիան

Նրանց պլակատների վրա գրված է՝

— Մենք կառուցեցինք Սելմաթր ժամկետից առաջ: Կոլսնեստությունների յեվ խորհսնեստությունների դաւեսերն ուղարկեցինք հազարավոր գյուղասնեստական մեքենաներ յեվ գործիքներ:

— Մենք ժամկետից առաջ ավարտեցինք Տրակտորներ: Կոլսնեստությունների յեվ խորհսնեստությունների համար որական բաց ենք թողնում արդեն 120 տրակտոր:

— Մենք «Գիգան» խորհսնեստության բանվորներս, պետությանն ենք տալիս միլիոնավոր ցենսներ հաց:

— Մենք՝ կոլսնեստականներս, գերակասարեցինք գարնանային ցանքսի պլանը:

Գպրոցականները հպարտությամբ սանում են իրենց պլակատը:

— Մենք դպրոցում պարապուրդներին կոխիվ ենք հայտարարել: Չկան մեզ մոտ անհառաջադետներ:

Հնարը չկա թվելու այն բոլորը, ինչ վոր անում են աշխատավորները սոցիալիզմի կառուցման համար:

ԱՇԽԱՏԱՆՔ

Գրեք, ինչպես տոնվեց ձեզ մոտ Մայիսի 1-ը այս տարի:

Գլխավորապես ինչ խնդիրների վրա յեր ուշադրություն գարձված:

ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ՏՈՆՈՒՄ ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ ԹԱԳԱՎՈՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Թագավորի ժամանակն էր: Մեր գործարանը Մայիսի մեկին դադարեցրեց աշխատանքը:

Բոլոր բանվորները հավաքվեցին բակում և միաձուլ շարքերով դուրս յեկան փողոց, առջևից տանելով կարմիր դրոշակներ, վորոնց վրա գրված էր՝

— Կեցցե՛ Մայիսի մեկը— աշխատավորության միջազգային տոնը:

— Կորչե՛ն կապիտալիստներն ու կալվածատերերը:

— Կեցցե՛ ութժամյա աշխատանքային որը:

Դեռ նոր էյինք դուրս յեկել դարպասից, մեր զեմը կրտեց ձիավոր վոստիկանների ջոկատը:

— Տրվե՛ք: Աշխատանքի կանգնեք:

Ի պատասխան՝ մենք յերգեցինք հեղափոխական յերգ:

Վոստիկանները կատաղեցին: Նրանք ներս խուժեցին մեր շարքերը և սկսեցին սրբերով և մտրակներով առանց խտրության աջ ու ձախ հարվածել:

Վիբրավոր և ծեծ կերած, հագիվ տներս հասանք, ել ավելի ատելությամբ լցված դեպի ճնշող-կապիտալիստները:

ԱՇԽԱՏԱՆՔ.—

Հետաքրքրվեցե՛ք, թե ձեր վայրում ինչպես էր տոնվում Մայիսի 1-ը մինչհեղափոխական շրջանում:

ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ

Վողջույն քեզ, մայիս
Հաղթական ու մեծ.
Վողջույն քո յերգին,
Քո հաղթանակին:

Պայքար վերեփի
Մայիսակյան տոն.
Բանվոր տղերքն են
Քեզ վողջույն քալիս:

Հին աշխարհ ենք սենք
Մաշինով փանդում,
Յե՛կ մայիսակյան
Ուրախ յերգերով
Առաջ ենք գնում
Հասնանք քայլերով:

Վողջույն քեզ, մայիս
Հաղթական ու մեծ:



ԽՍՀՄ-Ի ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏՐ
ՄԱՅԻՍԻ-Ն ԴԻՄՍՎՈՐՈՒՄ Ե
ՍՈՑԻԱԼԻՉՄԻ ԿՍՌՈՒՑՄԱՆ
ՀՍԿՍ. ՀՍ.ԳԹՍ.ՆԱԿՆԵՐՈՎ

ԿԱԴԻՏԱԼԻՍՏՆԵՐՆ «ԵԼԵԿՏՐՈՎԱՆ ԱԹՈՒԻ» ՄԻՋՈՑՈՎ ԵՆ ՈՒՋՈՒՄ ՓՐԿԵԼ

Ամերիկայի կապիտալիստները Սկոտսբորոյում (Սլաբամա նահանգ) պատրաստում են 8 յերիտասարդ նեզր բանվորների մահապատիժն «Ելեկտրական աթոռի» միջոցով:

Մահապատիժը նշանակված է մայիսի 13-ին:

Այդ ձևի «կոլտուրական» մահապատիժն առաջին անգամ չէ, վոր գործադրվում է Ամերիկայի դահիճների կողմից:

Ի՞նչն է պատճառը, վոր Սլաբամա նահանգի գերագույն դատարանի վորոշմամբ մայիսի 13-ին պիտի կայանա այդ նեզր բանվորների մահապատիժ գործադրումը:

1931 թ. մարտի 15-ին այդ դատապարտված նեզր աշխատավորներին ձերբակալել էյին Սկոտսբորո քաղաքի մոտ գտնվող կայանում, յերբ նրանք գնում էյին Մենֆիս աշխատանք գտնելու:

Այն գնացքի վագոններից մեկում, վորով գնում էյին այդ նեզր յերիտասարդները, կռիվ ծագեց սպիտակների և մի քանի նեզրերի մեջ:

Սպիտակները հեռագրեցին, վոր հետևյալ կայանում այդ նեզր յերիտասարդներին ձերբակալեն:

Վոստիկանապետը շրջապատեց գնացքը և ձերբակալեց զանազան վագոններում գտնվող 9 նեզրի, վորոնք բոլորովին տեղեկութուն էլ չունեյին պատահած կռվի մասին:

Ի՞նչվածների թվումն են նաև յերկու 14 տարեկան նեզր պատանիներ, վորոնց «բարեսիրտ» դատարանն անչափահասության պատճառով ազատեց մահապատիժից և ցմահ բանտարկության դատապարտեց:

Կապիտալիստները, ճնշելով թե իրենց յերկրի և թե գաղութների աշխատավորներին, աշխատում են թշնամություն առաջ բերել նրանց մեջ, զինել մեկին մյուսի դեմ, վորպեսզի մեռցնեն որեցոր աճող հեղափոխությունը և ազատվեն ստեղծված ճգնաժամից:

Զգալով իր անխուսափելի կորուստը, ամերիկական բուրժուազիան դիմում է զանազան բռնությունների և սպիտակ տերրորի:

Մահապատի յենթարկելով 8 յերիտասարդ նեզր բանվորներին, բուրժուազիան ցանկանում է սարսափահար անել թե իր յերկրի և թե գաղութների աշխատավորներին և հնարավորություն ստանալ էլ ավելի հարստահարելու նրանց և ամրապնդելու իր գրությունը:

Ամբողջ աշխարհի պրոլետարիատը բողոքում է այդ բարբարոսութեան դեմ: Հեղափոխական պրոլետարիատը և գաղութների աշխատավորութիւնը, համախմբվելով իր միակ հարազատ կուսակցութեան՝ կոմկուսի դրոշի տակ, Հոկտեմբերի ուրինակով դեն կըպրտի կապիտալիստական ծանր լուծը:

Մենք, ԽՍՀՄ-ի աշխատավորներս, կառուցել ենք սոցիալիզմի հիմքը մեր յերկրում. վերացնում ենք կապիտալիստական մնացորդները և ստեղծում անդասակարգ հասարակութիւն:

Մենք բողոքում ենք կապիտալիստների այդ վայրագութիւնների դեմ. կոչ ենք անում ամբողջ աշխարհի աշխատավորութեան խտացնելու հեղափոխական պրոլետարիատի շարքերը կապիտալիստական բանտերում տառապող հեղափոխական մարտիկներին ոգնելու և կապիտալիստական յերկրներում պրոլետարական հեղափոխութիւն առաջացնելու համար:

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ
ԿՍՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՃՆՇՈՒՄԻՑ
ՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԿՍՉՍՏՎԻ
ՄԻԱՅՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱԿԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

ԶԱՏԻԿԸ ՄԵՐ ՏՈՆԸ ՉԵ

Ամեն տարի գարնան, բոլոր քրիստոնյա հավատացյալները տոնում են իրենց տոնը—գատիկը:

Մեր յերկրում բանվորների, կոլտնտեսականների մեծ մասըն արդեն հասկացել է կրոնի վնասակարութիւնը. դրանցից շատերը մտել են «Անաստոված» միութեան շարքերը, հրաժարվել են կրոնից ու յեկեղեցուց, ծնունդի ու գատիկի տոներից:

Բանվորներն ու գյուղացիները մեր յերկրում կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ կառուցում են սոցիալիզմ:

Բայց դեռ կան շատ հետամնաց բանվորներ, ավելի յեվա գյուղացիներ, վորոնք շարունակում են դեռ հավատալ քրիստոնեյական հեքյաթներին, յեկեղեցի գնալ, յեկեղեցական տոները կատարել:

Այդ հետամնաց հավատացյալների կրոնականութիւնը ձեռնտու յե կուլակներին ու մեր ամեն տեսակի թշնամիներին՝ սոցիալիստական շինարարութիւնը խանգարելու:

Կապիտալիստական յերկրներում ել բուրժուազիան ոգտագործում է հետամնաց բանվորների ու գյուղացիների կրոնականութիւնը, նրանց հեղափոխական պայքարը թուլացնելու, նրանց ավելի խիստ շահագործելու:

ԻՆՉՈՒ ՄԱՐԴԻԿ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՆ ԴԱՐՁՆԸ

Քրիստոնեյական առասպելներից մեկն ել գատիկն է:

Ի՞նչ հեքյաթ է այդ, վորտեղից է առաջ յեկել, ումն է պետք զատիկ տոնը:

Շատ հին ժամանակներում, յերբ դեռ տեխնիկան հետամնաց եր, չկար վոչ յերկաթուղի, վոչ ելեկտրականութիւն, վոչ մեքենաներ, վոչ մինչև անգամ հասարակ գութան ու այլ գործիքներ—ել ուր մնաց ուղի, կինո, սավառնակ... յերբ մարդիկ շատ պարզ, պրիմիտիվ տնտեսութիւն ունեյին, նրանք չեյին հասկանում բնական ու հասարակական յերևույթներից շատ շատերը: Ի՞նչ է կայծակը, վորոտը, ինչի՞ց են առաջ գալիս տարվա չորս յեղանակները, ինչո՞ւ արևը ձմռան հեռանում է, ամռանը մոտենում, ինչո՞վ է բացատրվում ցերեկվա ու գիշերվա իրար հաջորդելը, այդ բոլորը չեյին հասկանում, չեյին կարողանում բացատրել, վորովհետե տեխնիկան թույլ եր, գիտութիւնն ու կուլտուրան՝ ցածր: Չեյին կարողանում հասկանալ և կարծում էյին, թե ինչ վոր ուժեր կան, վոր մարդու համար անյերևութ են ու այդ բոլորը նրանք են անում, նրանք դեկավարում: Յեվ նրանք աստվածացնում էյին այդ ուժերը, պաշտում նրանց:

Հեռավոր անցյալում մարդկանց կրոնական լինելն ել ավելի ամրանում եր և այլ պատճառով: Դեռ շատ հնում սկսվեց մարդկանց շահագործումը. կալվածատեր ազնվականները շահագործում էյին իրենց գրաված հողերի վրա բանող ստրուկներին, Ֆեոդալ-կալվածատերերը՝ ձորտերին, կապիտալիստները դեռ մինչև այժմ ել կապիտալիստական յերկրներում շահագործում են բանվորներին ու գյուղացիներին:

Տիրող գասակարգերն աշխատավորներու շահագործումն ել ավելի ամրապնդելու, նրանց միշտ իրենց յենթակա պահելու նպատակով ոգտագործում էյին (հիմի յել ոգտագործում են) կրոնք: Քարոզում էյին, վոր յեղած կարգերը աստծուց են հաստատված ու հավիտենական են: Մտրուկները, ճորտերն ու ներկայումս հետամնաց բանվորները (կապիտալիստական յերկրներում) հավատում էյին շահագործողների այդ քարոզիչներին, քանի վոր շահագործողների դեմ վարած պայքարում չկարողանալով հաղթանակել ու ազատագրվել, իրենց անգորութունը բացատրում էյին նրանով, վոր այդ կարգերը հավիտենական են ու աստծուց հաստատված:

Բայց Հոկտեմբերյան հեղափոխութունն ու պրոլետարիատի ղիկառատուրան մեր յերկրում, ինչպես և պրոլետարիատի ամենորյա պայքարը կապիտալիստական յերկրներում, ցույց է տալիս, վոր վոչ մի աստված չկա, վոր շահագործական կարգերը վերացնելը բանվորների իրենց գործն է:

ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋ ՅԵԿԱՎ ԶԱՏԿԻ ՏՈՆԸ

Մենք ասացինք, վոր նախնական մարդիկ բնության ուժերը չհասկանալով, աստվածացնում էյին նրանց ու պաշտում:

Հնում, արևելյան շատ յերկրներում, ինչպես Յեզիպոսում, Միջագետքում, Հին Հունաստանում, Հին Հայաստանում, Պարսկաստանում և այլ յերկրներում մարդիկ զբաղվում էյին յերկրագործությամբ և աշխատում էյին շատ պարզ գործիքներով: Դրա համար ել նրանց բերքը մեծ չափով բնությունից եր կախված: Յեղանակը (արևոտ կամ անձրևոտ, տաք կամ ցուրտ) հաճախ վորոշում եր այն ժամանակվա մարդկանց բախտը:

Ահա թե ինչու մարդիկ բնության յերևույթներն աստվածացնում էյին, պաշտում: Պաշտում էյին արևի, կրակի, բերքի, կայծակ ու վորոտի և այլ աստվածների, վորոնք իհարկե գոյութուն չունենին: Պաշտում էյին այդ աստվածներին, պատիվ անում, զոհ անում, խնդրում, աղերսում, վոր իրենց խնայեն, լավ բերք տան:

Յեզիպոսում, շատ հեռավոր անցյալում, պաշտում էյին Ողիբիս աստծուն, վոր բնակիչների կարծիքով իրանց փրկիչն եր: Նրանց մոտ այդ աստծու մասին կար առասպել, իբր թե Ողիբիսը ծնվել է, 28 տարի տալել, մարդկանց շատ արհեստներ ու գիտություններ է սովորեցրել: Հետո իբր թե դավաճանաբար սպանել են, բայց նա յերկինք է բարձրացել ու գատում է արգարներին ու մեղավորներին:

Քրիստոսի մասին յեղած հեքյաթն ել դրան շատ նման է. իբր թե Քրիստոսը ծնվել է, ապրել ու քարոզել, նրան խաչել են, հարություն է առել, յերկինք համբարձել, վորտեղից ել գատում է արգարներին ու մեղավորներին հոգիները:

Այդպիսի առասպել կար և հին Հունաստանում Դիոնիս աստծու մասին, կար Փյունիկիայում, Միջագետքում և ելի շատ յերկրներում:

Յեզիպոսիցիք Ողիբիսի տոնը կատարում էյին գարնանը, դյուղատնտեսական աշխատանքների նախորդակին: Քրիստոսի գատկի տոնն ել գարնանն է:

Ողիբիսի դերեզմանը պատկերացնում էյին հացահատիկի բույսերով պատած: Այդ ցույց է տալիս, վոր յեզիպոսիցիք պատկերացնում էյին, իբր ձմռան ամեն բան մեռնում է. հացահատիկ ել դեռնի մեջ գցում են՝ մեռնում է, իսկ յերբ գարունը բացվում է, տաքն ընկնում է, բնությունն ել կարծես արթնանում է, մեռած հացահատիկներից հացբույսեր են բանում:

Ո՞վ է անում այդ:

Յեզիպոսիցիք կարծում էյին, թե իրանց Ողիբիս աստծու գործն է այդ և վոչ թե բնության ու իրանց: Իսկ քանի վոր հացահատիկների լավ ծլելը, լավ աճելը նրանց տնտեսապես պիտի ապահովեր, դրա համար ել տոնում էյին ու պատիվ տալիս Ողիբիսին:

Քրիստոնեական գատկի հեքյաթը հին կոապաշտական հավատալիքներից է փոխառված: Քրիստոսի մահվան ու հարության տոնը հին կոապաշտական աստվածների—Ողիբիսի, Դիոնիսի, Ադոնիսի, Ատտիսի մահվան ու հարության տոնի նմանողությունն է: Իսկ դրանց բոլորի մահվան ու հարության տոնը՝ հին ժամանակվա հետամնաց յերկրագործական ժողովրդների գարնան տոնն է, սերմ ցանելու (սերմը ցանելիս իբր մեռնում է) և բանելու (իբր հարություն առավ) տոնը:

Այդպես է առաջ յեկել Քրիստոսի մասին յեղած գատկի հեքյաթը:

ՈՒՄՆ Ե ՊԵՏՔ ԶԱՏԿԻ ՏՈՆԵԼԸ

Զատիկն այժմ այլ նշանակութուն է ստացել:

Զատիկն այժմ կապիտալիստական յերկրներում բուրժուականներն ոգտագործում են իրենց գատակարգի նպատակների համար: Զատիկան ու այլ տոները բոլոր ձիակատարություն-

ները ծառայում են նրա համար, վոր հետամնաց բանվորների ու գյուղացիների ուղեղները մթազնեն, նրանց հեղափոխական թափը կապիտալիստական կարգերի դեմ՝ թուլացնեն:

Տերտերները քարոզում են՝ այ, տեսեք, Քրիստոսը համբերությամբ չարչարվեց, խաչվեց մարդկանց համար: Բանվորներ ու գյուղացիներ, դուք ել պետք է համբերեք, խոնարհվեք ձեր տերերին: Իսկ ի՞նչ է նշանակում կապիտալիստական յերկրներում բանվորների ու գյուղացիների համբերելը. նշանակում է յենթարկվել բուրժուազիային և թույլ տալ իրենց լավ շահագործել: Նշանակում է՝ չպայքարել կապիտալիստական կարգերի դեմ՝ չտապալել նրանց:


Ո՞ւմ համար են տերտերների քարոզները զատկի և այլն տոներին:

Այդ քարոզները ձեռնառու յեն միայն իրենց՝ տերտերների համար, կոյունտեսության և պրոլետարիատի թշնամի կուլակների համար:

Տերտերները, կուլակները և այլ դրանց ոգնականներն ոգտագործում են տոները, աշխատավորներին. սոցյինարարությունից հետ պահելու, սոցյինարարությունը խանգարելու, պրոլետարական իշխանության դեմ պայքարելու, նրան թուլացնելու:

Մեզ պետք չէ զատիկ, մեզ փրաս է զատիկն ել, ամեն տեսակի կրոնական տոներն ել:

Մենք կտոներնք պրոլետարիատի մեծ տոնը— մայիսի 1-ը:



ՅԵԿԵՂԵՑԻՆ ՅԵՎ ՏԵՐՏԵՐՆԵՐԸ


ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԿԱՄՔՈՎ ՈՒ ՆՐԱ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ
ՄԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՆ ՊԱՀՈՒՄ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ՝
Ն Ր Ա Ն Ց Շ Ա Հ Ա Գ Ո Ր Ծ Ե Լ Ո Ւ Հ Ա Մ Ա Ր

ՅՈՒՐԱՅՆԵՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ— ՀԱՐՎԱԾԵՆԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻՆ

ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԾԱՆՐԱԶԱՓԸ

Մի մեծ գյուղում ապրուս էր մեկ
Իմասուն տերտեր,
Անունը՝ տեր—Գագիկ:
Նրա մոտ էյին յերբեմն գալիս
Անթիվ գյուղացիք
ու անուս յսնդիք,
— Տեր-հայր, չի՞ յինի՝ մի մաղթանք անես,
Ասված անձրեկ տա, չորցան արտերիս:
Տերտեր նրանց պատասխանում է,
— Լավ եք յերգում, սիրելիք,
Արսս վարելու ժամանակ չունե՞ք:
Կուզե՞ք ծունկ չոքեք ու ծունք դրեք,
Տերտեր մաղթանք չի անի յերբեք:
Անցավ սի արթաք,
Տերտերն ինքն է գյուղացոց կանչում,
— Շո՛ւս հավաքվեցեք՝ մաղթանք անեմ,
Անձրեկի համար սրտը յսնդեմ,
Անձրեկը տեղա,
Հողն առսս բերք տա:
Հենց տերտերն յերկին նայեց,
Չեռները վեր հենց աղոթեց՝
Արեկմուսփոց սեկ ամպ բարձացավ,
Անձրեկը տեղաց, արտք հագեցավ:
Այդ ի՞նչ հրաւե է, ի՞նչպես պատահեց,
Տերտերն իր մաղթանքով չխայտառակվե՞ց:
Տեր-հոր փրկողը սրբությունը չէ,
Այլ գիտությունը:
Մեր տերտեր դարակին մի գործիք
ունեք դրած,

Յույց եր արախ չարային, անճեկոս
 Ու ամպամած.
 Այդ գործիքն եր ծանրաչափը՝
 գիտուն մարդկանց ենաւած:
 Թե ծանրաչափ ունենաս՝
 Իուն ել գուճակ կրաունաս:



Ծանրաչափ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԼԵՌՆՅԻՆԵՐԸ

I.

Մեր յերկրամասում ապրում են շատ լեռնցի ազգութիւններ՝ չեչեններ, ինգուշներ, կաբարդիներ, բալխարներ, կարաչայներ, ադրգեյներ, ոսեր, չերքեզներ: Դուք, տղաներ, հաճախ պատահում եք, տեսնում եք նրանց, բայց կարող ե լինել չգիտեք, ինչպես էլին նրանք ապրում առաջ:


Մի ժամանակ այդ ազգութիւններն ինքնուրույն են ապրել: Բայց ցարական կառավարութիւնը վորոշեց ուշժով նվաճել և յերկար ժամանակ կովեց նրանց հետ: Ուստի գեներալներն այրում, կործանում էին նրանց գյուղերը, գնդակահարում կանանց ու յերեխաներին, ավերում դաշտերը: Լեռնցիներին հարմար տեղերից բռնում էին վայրի կիրճերը:

II.

Ծանր եր լեռնցի աշխատավորների ապրուստը թագավորի ժամանակ: Շատ էլին նեղում նրանց ցարական չինովնիկները:

Բայց լեռնցի իշխանների և մուլաների վիշտն յերկար չտևեց. բանից դուրս յեկավ, վոր թագավորները սիրով թույլ տվին նրանց ճնշելու և թալանելու լեռնցի չքավորներին: Իսկ դրա փոխարեն պահանջում էին իշխաններից և մուլաներից հնազանդութեան մեջ պահել չքավորներին և թույլ չտալ, վոր ապստամբեն ցարական իշխանութեան դէմ:

Պարզ ե, վոր լեռնցի աշխատավորներն ատում էին ուսներին և, կարողացածի չափ, վրեժ էին առնում նրանցից: Այդ թշնամութեան մեղավորներն էլին՝ թագավորը, կապիտա-



լիստները, կալվածատերերը, վորոնք թալանում, ճնշում էին լեռնցիներին, խավարի, տգիտութեան մեջ էլին պահում նրանց և արգելում մտքենի լեզվով սովորելու:

Լեռնցիները տանջվում էին շատ հիվանդութիւններից, իսկ նրանց գյուղերում բժիշկներ և հիվանդանոցներ չկային: Իրենց անտեսութիւնն ստիպված էին վարելու ամենահետամնաց ձևերով: Նրանց մոտ վոչ մի մեքենա չէլին բերում, վոչ մի ֆաբրիկ ու գործարան չէլին բացում:

III.

Յե՛վ անա Հոկտեմբերյան հեղափոխութիւնը իւրեց իշխանների ձեռքից իշխանութիւնը և լեռնցի աշխատավորներին ազատութիւն տվեց: Խորհրդների իշխանութիւնը հնարավորութիւն տվեց նրանց վորքան կարելի յե լավ կառուցել իրենց կյանքը և զարգացնել իրենց անտեսութիւնը:

Լեռնցիների մոտ այժմ կառուցվում են ֆաբրիկներ և գործարաններ, կոլտնտեսութիւններ, ՄՏԿներ խորհրդատեսութիւններ, բերվում են շատ մեքենաներ և գյուղատնտեսական գործիքներ:

Լեռներում գցվում են հարմար, լայն ճանապարհներ, վորոնց վրա յեթևեկում են ավտոմոբիլներ և ավտոբուսներ: Հե-

ազգիքը, հեռախոսը, կինոն ու ռադիոն մուտք են գործում ամենախուլ գյուղերը:

IV.

Տարեց տարի լեռնցիների մոտ ավելանում է վոչ միայն տարրական, այլ և բարձրագույն դպրոցների թիվը: Մտցվել է ընդհանուր ուսուցում վոչ միայն յերեխաների համար, այլ և հասակավորների:

Յեվ ինչ ենք տեսնում: Այնպիսի կուլտուրապես հետամնաց մարդեր, ինչպիսին են՝ Ազրգեյան և Կաբարդան, ամենակարճ ժամանակամիջոցում դարձել են համատարած գրագիտության մարդեր: Այդ մարդերում վոչ մի անգրագետ չկա: Դրա համար նրանք պարզեատրվել են կարմիր դրոշով:

Բայց Ազրգեյան դրանով չբավարարվեց: Նա ուզում է իր փորձով ոգնել ավելի թույլ մարդերին: Նա բրիգադ է ուղարկում Դադստան, վորպեսզի ոգնի այնտեղ ևս կարգի բերելու կուլտուրական աշխատանքը:

Լեռնցի յերիտասարդությունը սովորում է կուրսերում, բանֆակներում, տեխնիկումներում և ԲՈՒՀներում:

Հարյուրավոր լեռնցիներ և լեռնուհիներ մտնում են ֆաբրիկներն ու գործարանները:

Հին թշնամությունը դեպի ուռաները մոռացված է. թե լեռնցի և թե ուռս աշխատավորները հասկացել են, վոր իրենց ընդհանուր թշնամիներն են՝ կապիտալիստները, կալվածատերերը, կուլակները և ամեն ազգությունների և կրոնների տերտերներն ու մոլլաները: Բոլոր ազգությունների աշխատավորները բարեկամ են իրար: Նրանց ընդհանուր հոգան է՝ ել ավելի բարձրացնել իրենց կուլտուրան, կառուցել ավելի շատ ֆաբրիկներ և գործարաններ, կոլտնտեսություններ, խորհրտնտեսություններ, պայքարել հնգամյակի համար, սոցիալիզմի համար և ոգնել ամբողջ աշխարհի աշխատավորությանն ազատվելու կապիտալիստների լծից:

ՀԱՐՅԵՐ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆԻ


- 1) Ձեր ապրած վայրում ի՞նչ լեռնցի ժողովրդներ կան կամ յեղել են:
- 2) Հետաքրքրվեցեք նրանց անցյալ և ներկա կյանքով:
- 3) Հյուսիսային Կովկասի քարտեզի վրա ցույց տվե՞ք ազգային ինքնավար հանրապետություններն ու մարզերը:
- 4) Աշխատեցե՞ք կապ հաստատել լեռնցիների վորևէ դպրոցի հետ:

«ԼԵՌՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ»

Կասպից ծովի արևմտյան ափին փոված է մի գեղեցիկ յերկրամաս, վոր կոչվում է Դադստան: Դադստան նշանակում է «լեռների աշխարհ»: Իգուր չէ, վոր նրան անվանել են «լեռների աշխարհ»: Դադստանի մակերևույթի համարյա կես մասը ծածկված է լեռներով:

Այս յերկրամասը հին ժամանակ, արաբական յերգիչներն անվանել են «լեզունների լեռ» վորովհետև այստեղ ապրելիս են յեղել և այժմ ել ապրում են բազմատեսակ ազգություններ: Դադստանում ապրում են 81 ազգություններ՝ լեզգիներ, չերքեզներ, դազի-կուսիկներ, հայեր, թուրքեր, թավլինցիներ, անդեցիներ, ուռաներ, հրեաներ, նազայցիներ, ավարացիք և ուրիշները: Բնակչության ընդհանուր թիվը մոտ 900,000 է:

Ռուս. միապետությունն ամեն կերպ աշխատում էր գրավել Դադստանը (նաև ամբողջ Կովկասը): Պարսկաստանի և տուրք յերկրների հետ առևտուր անելու ամենակարճ ճանապարհը



Դադստանցիներ

Կովկասն էր: Բացի դրանից, Կովկասից կարելի յեր հում նյութ ստանալ գործարանային ապրանքների փոխարեն: Բայց լեռնցիները հերոսաբար կովում էյին ուռսական միապետության դեմ: Ռուս-լեռնցիների կռիվը տևել է մոտավորապես 65 տարի, բայց վերջ իվերջո լեռնցիները հաղթվել են:

Միապետության հավատարիմ դահիճները— գեներալները, սուտ խոստումներ էյին անում լեռնցիներին, նրանք ասում էին՝ «ձեր հողը, անասունները, գույքն ու ձեր բոլոր ունեցված»

քը կմնա անձեռնմխելի, միայն անձնատուր յեղեք ոուս թա-
գավորի կամքին»: Միևնույն ժամանակ տասնյակ, հարյու-
րավոր աուլներ (լեռնցիների գյուղերը) քար ու քանդ էլին
անում, հավասարեցնում էլին հողին և ժողովրդին քշում դեպի
լեռները, մատնելով նրան սովի ու մահի:

Իհարկե Դադստանի տերերը—ցեղապետներն ու իշխաննե-
րը կարողացան մի ընդհանուր լեզու գտնել ոուս միապետու-
թյան հետ: Այսպիսով աշխատավոր լեռնցիները կրկնակի շա-
հագործվում էլին իրենց իշխաններին, հարուստների ու ոուս
միապետութայան կողմից:

Ոուս միապետութայան քաղաքականութունն, ինչպես բոլոր
ուտար ազգերի, նմանապես և Դադստանի լեռնցիներին կատամար
կայանում էր նրանում, վոր վերածեր այդ լեռկրները գա-
ղութացման, մեռցներ նրանց մեջ ինքնուրույնութայան ամեն
մի ձգտում, խանգարեր նրանց կուլտուրական զարգացման
գործը, հնարավորութունն չտար զարգացնելու մայրենի լեզուն,
պահեր նրանց սոցիալութայան մեջ, վորպեսզի շահագործելը, խա-
բելը հեշտ լիներ:

* * *

Միայն, շնորհիվ Հոկտեմբերյան հեղափոխության, ինչպես
լայնածավալ Ռուսաստանի աշխատավորութունը, նմանապես
Դադստանի լեռնցիներն ազատագրվեցին միապետութայան ա-
նարգ լծից:

* * *

Դադստանը չափազանց մեծ բնական հարստութուններ ունի
—նավթ, քարածուխ, վոսկի, ցինկ, ծծումբ, յերկաթ, տորֆ և այլն:

Եներգետիկ բազան.—նավթ, նավթի գազ, քարածուխ, փայտ,
քամու ուժը, սպիտակ ածուխի—ջրի ուժը և այլն հասնում է
2—2½ միլիոն ձիու ուժի:

Մինչև հեղափոխութունն էլ այս հանքերը կային Դադս-
տանի կրծքում, բայց, վորովհետև կապիտալիստական կարգերը
կաշկանդում էլին ազգային մարզերի տնտեսական ու կուլ-
տուրական զարգացումն, ուստի Դադստանն էլ մատնված էր տր-
գիտութայան ու աղքատութայան և վոչ մի հնարավորութուն
չուներ մշակելու իր ունեցած հանքերը:

Ցարական իշխանութայան որով Դադստանում գործարան-
ներ համարյա թե չկային: Բնակչութայան մեծագույն մասն
ապրում էր աուլներում և զբաղվում էր անասնապահությամբ,
անայնագործությամբ և մասամբ էլ ձկնորսությամբ: Բայց
շնորհիվ Դադստանի աշխատավորների յարված աշխատանքի,
կոմկուսի անշեղ ղեկավարութայան ու Լենինյան ազգային ու-

ղիղ քաղաքականութայան, այդ հեռամնաց յերկրն այժմ ունի
արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ, ինչպես որի-
նակ,—«Ուգնի» ապակու գործարանը, III ինտերնացիոնալի ան-
վան տեկստիլ Ֆաբրիկան, կաշեգործարանը, Դերբենդի էլեկտ-
րոկայանները, մեխի գործարանը, քիմիական գործարանը և
այլն: Այս գործարաններում աշխատող բանվորները վերացնում
են իրենց անզրագիտությունը և տեխանզրագիտությունը:

Ինչպես ասացինք, Դադստանի սոցիալիստական հանրա-
պետութայան բնակչութայան մեծագույն մասն ապրում է
աուլներում և պարապում է գյուղատնտեսությամբ: Սրա-
նից մի 10—11 տարի առաջ նահապետական արորով հերկ-
վող հողն այժմ ակոսվում է տրակտորով: Գյուղացու մեյա-
մաղձոտ մեղեգու փոխարեն այժմ լսվում է գյուղատնտեսական
մեքենաների խրոխտ աղմուկը: Ռանչպարի յերկինք դարձրած
արտասովալից աչքերը, վոր աղաչում էլին ասածուն անհաց չլիող-
նել, այժմ հառած են գրքին ու թերթին:

Վերջին տարիների ընթացքում Դադստանում կազմակերպ-
ված են 18 խոշոր խորհրդային տնտեսություններ (սովխոզ-
ներ) վորոնք մշակել են մոտ 300,000 հեկտար հող: Գյուղացի-
ների կեսից ավելին ընդգրկված է կոլտնտեսությունների մեջ:
Մշակվում է մեծ քանակությամբ բամբակ ու կանեփ: Անասնա-
պահությունը գնալով զարգանում է, բազմացնում են ընտիր
տեսակ վոչխարներ—մերինոս և խոշոր յեղջուրավոր անասուններ:

Դադստանը հեռ չի մնում նաև կուլտուրական շինարա-
րութայան գործում: Այնտեղ կան մոտ 100 առաջին աստիճանի
դպրոցներ, վորտեղ սովորում են 100,000 աշակերտներ: Տասը
տարվա ընթացքում 100 հազար հոգի վերացրել են իրենց ան-
զրագիտությունը: Հրատարակվում են 9 զանազան թերթեր և
ունեն պետական թատրոն: Դադստանում մտցված է ընդհանուր
պարտադիր ուսում:

* * *

Տասը տարվա ընթացքում շատ բան է արված, բայց գա
բավական չե համեմատած այն հնարավորությունների հետ,
վոր կան Դադստանում: Նա պետք է դառնա արդյունաբերա-
կան խոշոր կենտրոն:

1932 թ. այսինքն ընթացիկ տնտեսական տարում, Դադս-
տանում պիտի կառուցվեն 38 նոր ձեռնարկություններ, վո-
րոնցից 35 -ը հենց այս տարի պետք է սկսեն աշխատել
(բիմիական գործարանը, Գերգիբելդեսը, Սուլակի հիդրոէլեք-

հակառակը՝ նոսր բուրգը տեղի յե տալիս ձմեռվա բրդին: Հենց այդ պատճառով էլ ճագարներին մորթելու ամենալավ ժամանակն է համարվում ուշ աշունն ու ձմեռը, յերբ նրանց մորթին խիտ և լինում ու գեղեցիկ: Այդ ժամանակ նրանց միսն էլ ավելի համեղ է լինում:

Մինչև շրջեցինք ճագարանոցի մի ծայրից մյուսը, որը կեսոր դարձավ: Վճռեցինք մի քանի հարց էլ տալ ընկ. Բալաբուխին և մնաս բարով ասել նրան:

— Ասացեք, ընդամենը քանի՞ գլուխ ճագար կա ձեր մոտ:

— Մենք ունենք 150 պարկետ: 30 պարկետում տեղավորված են 300 մայր ճագարներն իրենց 1500 դեռ 2 ամիսը չլրացած ճագերով: 70 պարկետում ապրում են 1400 ձագ, 2-ից մինչև 4 ամսական հասակով: 50 պարկետում տեղավորված են 1000 գլուխ 4-6 ամսական ճագարներ: Բացի սրանցից, ունենք 60 հատ ցեղային վորձ ճագարներ (5 եզին մի վորձ), վորոնց պահում ենք ջուկ-ջուկ վանդակներում, վորովհետև միասին պահելիս նրանք կռվում են ու իրար մորթի փչացնում: Ուրեմն ընդամենը մեր ֆերմայում կա 4260 ճագար: Անցյալ տարի այս ժամանակ ունեցինք միայն 1420 գլուխ:

— Հետաքրքիր է, ո՞ր եք ուղարկում ճագարների միսը:

— Միսը համարյա ամբողջովին ուղարկում ենք արդյունաբերական կենտրոններն ու քաղաքները: Անցյալ տարի ուղարկել ենք 3500 կիլոգրամ միս. այս տարի պետք է ուղարկենք 9000 կիլոգրամ: Կասկած չկա, վոր պլանը կկատարենք: Ասում են, մեր ճագարների միսը բանվորական ճաշարաններում մեծ հաճույքով են ուտում:

— Իսկ մորթիներն ո՞ր եք ուղարկում:

— Հանձնում ենք Սոյուզպուլչինային* հատը 3-5 ուռբլով: Անցյալ տարի հանձնել ենք 1600 հատ, այս տարի պետք է տանք 5000 հատ:

— Գիտե՞ք արդյոք, վորքան ճագարի մորթի յե տալիս ամբողջ Հյուսիսային Կովկասը:

— Գիտեմ— ասաց ընկ. Բալաբուխը.

1928 թվին Հ. Կովկասում մթերվել է	28.000	մորթի
1929 թվին Հ.	»	» 82.000 մորթի,
1930 » »	»	» 516.100 »
1931 » »	»	» 1.600.000 »
1932 » »	»	» 4.500.000 »:

*Սոյուզպուլչինան պետական մի կազմակերպություն է, վորն զբաղվում է մորթիների մթերման գործով:

Սեղմեցինք ընկ. Բալաբուխի ձեռքը, շնորհակալություն հայտնեցինք նրան այսքան հետաքրքիր տեղեկությունների համար և հեռացանք ճագարաբուծական ֆերմայից, տանելով մեզ հետ անմոռանալի տպավորություններ:

ԱՇԽԱՏԱՆՔ ՅԵՎ ՀԱՐՅԵՐ

- 1) Հետաքրքրվեցեք ձեր վայրում ճագարանոցներ կան, թե վոչ:
- 2) Ճագարներն ապրում են պարկետներում, թե վանդակներում:
- 3) Ինչո՞վ են նրանց կերակրում:
- 4) Դպրոցական հողամասում կազմակերպեցեք ճագարների համար մի պարկետ:

ՄԵՐ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՅԽԱՏԱՆՔԸ

ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Ե ՄՆՎԵԼ

Վորպեսզի մարդ կարողանա աշխատել, պետք է սնվի: Շոգեմեքենան չի կարող աշխատել առանց վառելիքի, տրակտորը չի շարժվի իր տեղից, յեթե նրա մեջ վառելանյութ չլինի. մեր մարմինն էլ չի կարող աշխատել, յեթե մենք չը սնվենք: Շոգեմեքենայի, տրակտորի մեջ, իբր վառելանյութ, ծառայում են՝ ածուխը, նավթը, վորոնք այրվում են այսինքն՝ միանում են ողի մեջ յեղած թթվածնի հետ և առաջացնում են տաքություն. այդ տաքություն, եներգիայի ուժի շնորհիվ է, վոր նրանք աշխատում են: Իսկ մեր մարմնի համար, իբր վառելանյութ, ծառայում են սննդանյութերը, վորոնք նույնպես մեր մարմնի մեջ այրվում են, այսինքն՝ միանում են շնչառության ժամանակ ողից վերցրած թթվածնի հետ և այդպիսով առաջանում է տաքություն մեր մարմնի մեջ:

Չեզ բոլորիդ հայտնի յե, վոր մեր մարմինն ամառ ձմեռ միշտ էլ ունի վորոշ աստիճանի տաքություն, վորը հավասար է միջին հաշվով 37 աստիճանի: Ֆիզիքական աշխատանք կատարելիս այդ տաքությունն էլ ավելի շատանում է, վորովհետև յերբ մկանները կծկվում են, սննդանյութերի այրումը նրանց մեջ կատարվում է շատ ավելի ուժեղ և մեծ չափով: Այդ է

պատճառը, վոր աշխատանքից հետո մարդ ուտել է ուզում-
ներս ընդունած սնունդը վերամշակվում է և այրված նյու-
թերի տեղը բռնում:

ՄԵՐ ՍՆՆԻԱՆՅՈՒԹԵՐԸ

Գիտնականներն, ուսումնասիրելով մեր սննդանյութերը, գտել են, վոր նրանք պարունակում են իրանց մեջ գլխավորապես յերեք տեսակի նյութեր՝ նարպեք, սպիտակուցային նյութեր յեվ ածխազրեր:

Թվեցեք սննդանյութեր, վորոնք պարունակում են իրանց մեջ, ճարպային նյութեր: Ճարպերը յուղի հետք են թողնում թղթի վրա:

Ածխաջրերից ամենից ավելի մեզ ծանոթ են ռախարը յեվ ուրան: Թե ինչպես իմանալ կա՞ արդյոք շաքար մեր կերածի մեջ, այդ դուք շատ լավ գիտեք իսկ ուրայի գոյությունը յերևան հանելու համար կատարեցեք հետևյալ փորձը:

Պատրաստեցեք յուղի թույլ լուծույթ և կաթեցրեք ուլա-
ից (կարտոֆիլի ալյուրից) պատրաստած կիսելի վրա: Ի՞նչ
գույն է ստանում ուլայի սպիտակ կիսելը: Յուղի լուծույթը
քսեցեք սպիտակ հացի, կարտոֆիլի, կաղամբի վրա. վորոշեցեք
կա՞ արդյոք նրանց մեջ ուլա: Ածխաջրեր կան մեծ մասամբ
հացահատիկների և բանջարեղենների մեջ:

Սպիտակուցային նյութեր կան ամենից ավելի մսի, հավ-
կթի, կաթի, լոբու, սիսեռի, վոսպի մեջ և այլն:

Սպիտակուցային նյութերը չափազանց կարևոր են կյան-
քի համար: Յեթե կենդանուն յերկար ժամանակ կերակրենք
այնպիսի սննդով, վոր գուրկ է սպիտակուցային նյութերից,
կենդանին կարող է հիվանդանալ և նույն իսկ մեռնել:

Յեթե մարդ սնվի մսով, միայն կարտոֆիլով կամ միայն
կարագով, մարսողական գործարանների աշխատանքները կա-
րող են խանգարվել և ծանր հիվանդություններ առաջանալ:


Յեթե մեր կերած հացը միսը, կաթը, գետնախնձորը, սնն-
դամթերքներն ուսումնասիրենք, կտեսնենք, վոր այնտեղ կան
այդ նյութերը: Որինակ՝ հացն իր մեջ պարունակում է մեծ չափով
ածխազրեր, շատ քիչ քանակությամբ սպիտակուցային
նյութեր, իսկ ճարպեր բոլորովին չկան:

Իրա փոխարեն միան իր մեջ ունի մեծ չափով սպիտակուց-
ներ, վորոշ չափով այնտեղ կան ճարպային նյութեր, իսկ ած-
խաջրեր համարյա թե չկան:

ԻՆՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ե ԿՐՈՒՄ ԿԵՐԱԿՈՒՐԸ ՄԱՐՍՈ- ՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Ծանոթացեք մարսողական գործարանների հետ այս պատ-
կերի միջոցով: Յույց ավելք ի՞նչ ճանապարհով է անցնում մեր
կերածը, նկարեցեք ձեր տետրակում այս սխեմատիկ նկարը և
նրա վրա գրեցեք ամեն մի մասի անունը՝ բերան, կերակրա-
փող, ստամոքս, բարակ աղիք, հաստ աղիք:

Ինչ փոփոխություն է կրում կերակուրը բերանում: Այս-
տեղ նա ատամների շնորհիվ մանրանում է, թքի հետ խառ-



Սննդառության գործարանները

նվելով փափկանում է, լեզուն դարձնում է նրան այս ու այն
կողմ, վորպեսզի բոլոր կողմ մասերը մանրացվեն ատամների
տակ և լավ խառնվեն ու շաղախվեն թքով:

Թուրքը, սակայն, վոչ միայն փափկացնում է կերակրի կարծր մասերը, այլ և ազդում է նրա մեջ գտնված ոսլայի վրա և դարձնում է նրան շաքար:

Մի կտոր հացը յերկար ժամանակ լավ ծամեցեք և ուշադրութուն դարձրեք, թե ինչ համ եք զգում:

Յերկու փորձանոթի մեջ դրեք մի-մի կտոր յեփած ոսլայի կիսել, մեկի վրա ավելացրեք ջուր, իսկ մյուսի վրա թքեցեք այնքան, վոր ծածկվի կիսելը: Լավ թափ տալուց հետո յերկու փորձանոթն ել դրեք տաք ջրի մեջ, 15 րոպե անց նորից թափ տվեք փորձանոթները և յերկուսի վրա յել կաթեցրեք մի քանի կաթիլ յողի լուծույթ: Ի՞նչ եք նկատում, ի՞նչ փոփոխութուն է կրել ոսլան, վորի վրա թքել ելիք:

Ոսլան ջրի մեջ չի լուծվում, իսկ շաքարը լուծվում է, այդ պատճառով ել ոսլան չի կարող անցնել աղիքի պատերից, իսկ շաքարը ջրի մեջ լուծվելով կարող է ներծծվել աղիքի պատերից և մտնել արյան մեջ:

Ուրեմն կերակրի մեջ գտնված վոր աննդանյութերը մաքրվում են բերանում:

Այս փոփոխություններից հետո կերակուրը բերանից անցնում է կերակրափողի միջով ստամոքսը:

Ստամոքսի պատերից կերակրի վրա թնփվում է ստամոքսային հյուսթը: Ինչպես բերանում թքի ազդեցության տակ փոփոխվում է ոսլան, այնպես ել ստամոքսում, ստամոքսային հյուսթի շնորհիվ փոփոխվում են սպիտակուցային հյուսթերը, այսինքն նրանք դառնում են այնպիսի հյուսթեր, վորոնք կարող են լուծվել ջրի մեջ և նրանց հետ ներծծվել աղիքի պատերից:

Ստամոքսի մեջ կերակուրը մնում է 2—3 ժամ, վորից հետո նա անցնում է աղիքները:

Յուսյց ավեք պատկերի վրա լյարդը և յենթաստամոքսային գեղձը: Լյարդը պատրաստում է լեղի, վորն առանձին խողովակով լեցվում է աղիքների մեջ: Յենթաստամոքսային գեղձը նույնպես իր պատրաստած հյուսթն ուղարկում է դեպի աղիքները: Այդ հյուսթերի և լեղու ազդեցության տակ աղիքների մեջ փոփոխության են յենթարկվում բոլոր աննդանյութերը՝ ոսլան, սպիտակուցային հյուսթերը և ճարպը:

Այս փոփոխություններից հետո բոլոր այն հյուսթերը, վորոնք չեն լուծվում ջրի մեջ, այժմ լուծվում են և աղիքի ու ստամոքսի պատերից անցնում արյան մեջ:

Չմաքրված և անպետք մասերն անցնում են հաստ աղիքը և այնտեղից դուրս հանվում մարմնից:

ԽՆԱՄԵՅԵՔ ԱՏԱՄՆԵՐԴ

Ինչպես տեսանք վերևում, ատամները, մանրացնելով կերակրի կարծր մասերը, հեշտացնում են մարսողության գործողությունները. վատ ատամներով չի կարելի կերակուրը լավ ծամել, այդ պատճառով ել կը դժվարանան ստամոքսի և աղիքների աշխատանքները, կը հիվանդանա ստամոքսը:

Ինչլից են փչանում մեր ատամները:

Ատամները ծածկված են ապակու նման մի նյութով, վոր կոչվում է եմալ:

Ինչպես վոր սառը բաժակի մեջ տաք ջուր լեցնելիս բաժակը կարող է կոտրվել, այնպես ել տաք կերակրից հետո, յեթե սառը ջուր խմենք,—ատամների եմալը կարող է ճաքել:

Պատառաքաղով, մեխով, ասեղով, և կամ մի այլ պինդ նյութով ատամները փորելիս նույնպես կարող է վնասվել եմալը:

Այդ առաջացած ճեղքերից զանազան միկրոբներ և կերակրի մնացորդներ ներս մտնելով ստամի մեջ, կարող են ստամի փտելու պատճառ դառնալ: Փչացած ատամը կարող է վարակել իր հարևան ատամներին, ուստի որ առաջ պետք է զվմել բժշկին:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Մի խմիր սառը ջուր տաք կերակրից հետո և ընդհակառակը:
2. Չմեռ ժամանակ շնչեցեք բթով, վորպեսզի պաղ ոդը չսառեցնի ատամներն ու կոկորդը:
3. Վողողեցեք բերանը ճաշելուց հետո և մաքրեցեք ատամներդ ամեն օր, մանավանդ յերեկոները, պառկելուց առաջ:

ԱՏԱՄՈՔՍԻ ՅԵՎ ԱՂԻՔՆԵՐԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Պետք է սնվել վորոշ ժամերին, այն ժամանակ ստամոքսն ավելի լավ է հանգստանում և պատրաստում է բավականաչափ ստամոքսային հյուսթ:
2. Ավելի լավ է քիչ ուտել, բայց հաճախ: Յեթե ուտեք ուշ ուշ և միանգամից մեծ քանակությամբ, ստամոքսի հյուսթը չի բավականանա կերածը մարսելու համար և կը ծանրաբեռվան թե ստամոքսը և թե աղիքները:

3. Նախ քան դպրոց գնալը պետք է ուստել. դպրոցում սովորելը նույնպես աշխատանք է. յեթե առանց ուստելու աշխատեք, որգանիզմը կարող է թուլանալ:

4. Վորպեսզի գիշերը քնեք խորը և հանգիստ, յերեկոյան վերջին անգամ պետք է ուստել առնվազն քնելուց յերկու ժամ առաջ:

5. ՄԻ ԳՈՐԾԱԾԵՔ ԱԼԿՈՀՈԼ

Գինի կամ ողի խմելուց հետո մարդ դառնում է ավելի ուրախ, շատախոս, բայց մի քիչ ժամանակ անցնելուց հետո նրա գլուխն է պտտվում, դժվարությամբ է հասկանում իր շուրջը կատարվածը, մթազնում է գիտակցությունը, դժվարանում է աշխատել և պակասում է նրա աշխատանքի արդյունավետությունը:

Կենդանիների վրա կատարված փորձերը ցույց են տալիս, վոր յեթե շան ձագերին խմեցնենք սպիրտ, նրանք չեն զարգանա: Կան մարդիկ, վոր չեն խմում այնքան, վոր հարբեն, բայց ամեն որ քիչ քիչ խմում են, կարծելով վոր դա վնասակար չէ, մինչդեռ դա սխալ է:


Ալկոհոլը թույն է, նա աստիճանաբար թունավորում է որգանիզմը և պատճառ դառնում մարմնի զանազան գործարանների (ստամոքսի, աղիքների, սրտի, ուղեղի) հիվանդության: Ալկոհոլիկներն ավելի հաճախ են հիվանդանում քան չխմողները, նրանց վորդիներն ել շատ հաճախ ծնվում են հիվանդոտ, այդ է պատճառը, վոր բժիշկը յերբ քննում է գունատ և թուլակազմ յերեխաներին, հարցնում է՝ «ծնողներն արդյոք հարբեցողներ չեն»:

Պրոֆեսոր Կարլ Գեյլի վեբ բարձրացույ դասակարգ է: Նա կարիք չի գտնում հարբելու, վոր գրգռում է նրան յեվ հետո մթազնում նրա գիտակցությունը:
Նրա համար պեժ է— պարզություն, պարզություն յեվ դարձյալ պարզություն: Յերբեք չպեժ է լինի վոչ մի բուլություն յեվ ուժերի վասնում ու վոչնչացում:
ԼԵՆԻՆ

Ինչպե՞ս են կազմված յեվ ինչպե՞ս են աշխատում շնչառության գործարանները.— Վորպեսզի մեր ընդունած սննդանյութերն այրվեն մեր մարմնի մեջ և առաջանա տաքություն, անհրաժեշտ է թթվածին:

Թթվածինը մենք վերցնում ենք ողից, ներշնչելու ժամանակ: Ներշնչած ողը գնում է թոքերի մեջ:

Յեթե հնարավոր է, ձեռք բերեք վոչխարի կամ հորթի թոքերը, ցույց տվեք նրա վրա շնչափողը, վորը թոքերի մոտ բաժանվում է 2 բրոնխների. բրոնխները մտնում են աջ ու ձախ թոքերի մեջ: Շնչափողի անցքը փակեցեք խցանով, վորի միջով անցկացրեք ապակյա խողովակ, ուժեղ փչեցեք այդ



Շնչառության գործարանը

խողովակից, մինչև վոր թոքերն ուռչեն, ապա դադարեցեք փչելուց. ի՞նչ եք նկատում, ինչո՞ւ շնչափողից դուրս է գալիս ողը: Կտրատեցեք մկրատով թոքերը բրոնխների յերկարությամբ, հետևեցեք, թե ինչպես նրանք ճյուղավորվում են: Մանր բրոնխները վերջանում են թոքային մանր փամբշտիկներով, վորոնց հասարակ աչքով տեսնել չի կարելի: Ներշնչելու ժամանակ ողը հասնում է մինչև այդ փամբշտիկները: Չենց այստեղ է, վոր ողի միջից բաժանվում է թթվածին գազ և անցնելով փամբշտիկների պատերից, մտնում է արյան մեջ, իսկ արյան միջից ել ամխաթթու գազը, վոր կազմվում է մեր մարմնի մեջ նյութերի այրումից, մտնում է փամբշտիկի մեջ:

Արտաշնչելու ժամանակ փամբշտիկի միջի ողը դուրս ե գալիս, իր հետ տանելով նաև ածխաթթու գազը:

Ինչպես ապացուցել, վոր մեր արտաշնչած ողի մեջ կա ածխաթթու գազ:

Պատրաստեցեք կրաջուր—դրա համար վերցրեք մի կտոր չհանգած կիր, վրան լցրեք ջուր (ի՞նչ ե կատարվում): Կիրը հանգչելուց հետո թորեցեք ջուրը ծծան թղթի միջոցով, այնպես վոր ստացվի պարզ մաքուր ջուր. դա կոչվում ե կրաջուր: Լցրեք 2 բաժակ կրաջուր, վորոնցից մեկի մեջ փուքսի միջոցով փչեցեք ող, իսկ մյուսի մեջ դրեք ապակյա կամ ռեզինե խողովակ և փչեք:

Ի՞նչ եք նկատում, ինչո՞ւ համար փչելիս փոխվում ե կրաջրի գույնը:

Բոլոր կենդանիները շնչում են անընդհատ. մի բույսը կամ հասակավոր մարդը շնչում ե 16-18 անգամ:

ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Շնչելու համար ողը պետք ե լինի մաքուր, այսինքն նա պետք ե ազատ լինի ածխաթթու գազից, փոշուց և այլ վնասակար գազերից, վորոնք կարող են վնասել մեր որդանիզմին:

2. Դասից անմիջապես հետո, ընդմիջումի ժամանակ անմիջապես բացեք պատուհանը կամ ողանցքը և դուրս յեկեք դասարանից, վորպեսզի դասի ժամանակ հավաքված կեղտոտ ողը մաքրվի: Հաճախ մաքրեցեք ձեր դասարանի և բնակարանի ողը:

3. Պարտեզում, բանջարանոցում և դաշտում աշխատելն ոգտակար ե թոքերի համար, վորովհետև այնտեղ ողը մաքուր ե, հարուստ ե թթվածնով և ազատ ե ածխաթթու գազից:

4. Թունավոր գազերը վնասում են մեր թոքերին և քայքայում են մեր առողջութունը: Պատերազմի դաշտում իբր թունավոր գազ, գործածում են քլոր, ֆոզգեն, քլորփիտիլ, վորոնք չափազանց քայքայիչ ազդեցություն են թողնում թոքերի վրա և նույնիսկ մահվան պատճառ են դառնում:

5. Թոքային հիվանդություններից ամենատարածված հիվանդությունն ե թոքախտը, վոր առաջանում ե հատուկ բակտերիաների պատճառով: Այդ բակտերիաները մեծ քանակությամբ գտնվում են փոշոտ, խոնավ և մութ բնակարաններում և ներշնչած ողի հետ մտնում են թոքերի մեջ և քայքայում նրանց:


ԱՐՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Մենք արդեն տեսանք, թե ինչպես արյունը վերցնում ե աղիքներից սննդանյութերը, իսկ թոքերից թթվածինը և տանում ե նրանց մարմնի բոլոր մասերը, հեռացնում այնտեղից ածխաթթու գազը և զանազան անպետք նյութերը, վորոնք առաջանում են նյութերի այրումից:

Վորպեսզի արյունը կատարի այդ աշխատանքը, նա պետք ե շարժման մեջ լինի: Ո՞վ ե շարժման մեջ դնում արյունը: Այդ պաշտոնն իր վրա յե վերցրել սիրտը:

Ծանոթանանք սրտի կազմության և աշխատանքի հետ: Սիրտը գտնվում ե կրծքի խոռոչում, թոքերի միջև, մի քիչ ձախ կողմը:

Իրեք ձեռներդ ձախ կողմը կրծքի վրա և հետևեցեք, թե ինչպես ե նա զարկում: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես ե նա աշխատում, յերբ նստած եք հանգիստ և վաղելու ժամանակ:




Սիրտը

Յեթե հնարավոր ե, ձեռք բերեք մի վորևե կենդանու (վոչխարի, հորթի, կովի և այլն) սիրտ: Կտրեցեք սիրտը յերկարությունմբ, դուք կը տեսնեք նրա մեջ 4 խոռոչ, վորոնցից 2-ը կոչվում են նախախորշեր, յերկուսն ել սրտախորշեր: Նախախորշերի և սրտախորշերի միջև կան փականներ, վորոնք բացվում են դեպի սրտախորշերը:

Սրտախորշերից դուրս են գալիս խողովակներ, վորոնց միջոցով արյունը դուրս է գալիս սրտից՝ դրանք կոչվում են զարկերակներ: Դեպի նախախորշերը արյունը հավաքվում է մի քանի խողովակներով, վորոնք կոչվում են յերակներ:

Յերբ սրտախորշի մկանները կծկվում են, արյունը դուրս է գալիս ձախ սրտից զարկերակների միջոցով և տարածվում մարմնի բոլոր մասերը, տալիս է նրանց իր մեջ ունեցած սննդարար նյութերը և թթվածինը և վերադառնում յերակների միջով դեպի սիրտը, իր հետ բերելով նաև ածխաթթու գազը: Այդ է պատճառը, վոր զարկերակի մեջ յեղած արյունը բաց կարմիր գույն ունի, իսկ յերակինը՝ մուգ կարմիր:



Արյան շրջանառության սքեմա

Յերակների բերած կեղտոտ արյունը աջ սրտախորշից դարձյալ դուրս է գալիս և գնում է դեպի թոքերը, վորտեղ թողնում է ածխաթթու գազը և հարստանում թթվածնով ու վերադառնում սիրտ:

Ուրեմն արյունը յերկու անգամ է շրջան անում. մի անգամ նա շրջում է մարմնի զանազան մասեր, վորպեսզի սնունդ ու թթվածին տա մարմնի բոլոր մասերին և հավաքի ածխա-

թթու գազ և անպետք նյութեր (արյան մեծ շրջանառություն), իսկ յերկրորդ անգամ գնում է թոքերը, վորպեսզի այնտեղի ողից վերցնի թթվածինը և բաց թողնի ածխաթթու գազը (փոքր շրջանառություն):

ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Յերբ մարդ ուժեղ աշխատանք է կատարում, սիրտը բաբախում է ավելի ուժեղ, վորովհետև պետք է ավելի մեծ քանակությամբ և արագ-արագ սնունդ ու թթվածին հասցնի մկաններին և ուղեղին: Յեթե մարդ ընդհանրապես աշխատանք չի կատարում, նրա սիրտն ել արագ աշխատելու վարժ չի կարող լինել, ծանր աշխատանք կատարելու դեպքում, նրա սիրտը կարող է հիվանդանալ:

Ուրեմն անհրաժեշտ է վարժեցնել սիրտը, վորպեսզի նա զանազան պայմաններում լավ աշխատի: Ֆիզիքական աշխատանքի և ֆիզկուլտուրայի (վազել, ձմեռը սահնակ խաղալ, ամառը նավակ թիավարել ու լողալ և այլն) միջոցով կարելի է վարժեցնել սիրտը:

տակ—շրջանը դնել տեղը և ողածն կապով ամրացնել, ինչպես ցույց է տրված պատկերի վրա:

6. Պատրաստել դույլի կոթի համար ականջիկներ (տես նկարը):

7. Գամերով ամրացնել ականջիկները դույլի յերկու կողմից:

8. 4—5 մմ. հաստության յերկաթալարը ծռելով, կիսաշրջանագծի ձև տալ, ծայրերը կլոր բերան ունեցող աքցանով ծռել և անցկացնել ականջիկների ծակերից:

9. Գույլի կոթը, պատը և հատակը դրսի կողմից յուղաներկով ներկել:

ՊԱՏԱՆԻ ԲՆԱԽՈՒՅՁ, ՊԱՏՐԱՍՏՎԻՐ ԵՎՍԿՈՒՐՍԻԱՅԻ

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՏՈՊՐԱԿ

Ամեն մեկն իր համար կարող է կարել արշավանքի գեղեցիկ տոպրակ:

Այդ կարելու համար ամենալավ նյութ կարող է ծառայել շուր չձծող բարակ բրեզենտը:


Ձեր վերջրած կտորի վրա կավճով գծագրեք 112 սմ. յերկարության և 52 սմ. լայնության ուղղանկյունի (տես նկարը): Կտրեք այդ ուղղանկյունին և նրա կարճ կողմերի մեկից 3 սմ. լայնության շերտ ծալեք, կտրեք ծալածը, ապա յերկրորդ անգամ ծալեք: Այդպիսով ծալած կլինեք 6 սմ.: Կտրեք այդ կողմը: Նույնը կրկնել և հակադիր կողմի վրա:

Այժմ ձեր ուղղանկյունու յերկարությունն ուղիղ 100 սմ. է: Ծալեք նրան կիսով և կտրեք յերկու կողմից: Կատացվի տոպրակ: Նրա կողմերից մեկի վերևից և մեջտեղից 17 սմ. յերկարությամբ կտրեք և ծայրերից, նեղ ծալելով, կտրեք:

Այժմ շուռ տվեք տոպրակը դեպի յերեսի կողմը և բրեզենտի մնացած կտորներից ձևեք յերկու գրպան (14×16 սմ) և 21 սմ. յերկարության և 15 սմ. լայնության յերկու կլապան ցույց տված ձևով. գրպաններն ու կլապանները կտրեք իրենց տեղում:

Կլապանը կարվում է կտրածի դիմաց (ամբողջական կողմի վրա), իսկ գրպանները՝ կտրածի կողքերից, տոպրակի վարի մասից 15 սմ. դեպի վեր:

Մնում է տոպրակի բերանի բոլորքի յերկարությամբ բաց անել իրարից հավասար հեռավորությամբ 16 ծակիկներ, դրանց




միջով թել անցկացնել, տոպրակի բերանը կապելու համար: Ծակիկների յեզրերը կարել և կաշվե փոկեր ամրացնել:


Չափուստներն ամրացնել կաշվե կտորներով: Տոպրակի ներքևի մասին ամրացնել յերկու կարճ փոկեր ծալած ձևով վերմակը կապելու համար և յուրաքանչյուր գրպանի տակը՝ մեկական չափուստ՝ փոկերի համար:

1932. 5

ՌԵԲՈՒՍ № 3



ՌԵԲՈՒՍ № 4



«Ուսման հասվածային»-ի № 1-ում տպագրված ռեբուսների լուծումը
 ՌԵԲՈՒՍ 1. Ձեր խմբում բանի հատվածային կա:
 ՌԵԲՈՒՍ № 2. Փոխարինողներին փոխարինողներ են գալիս:

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹՅՈՒՆ

Զորքով, ավարտական տարին.— Գ. Պետրոսյան . . . 3
 Թվերը խոսում են.— Մ. Փրբումյան . . . 7
 Ապահովենք սոցիալիզմի կառուցումն իմպերիալիստների հարձակումներից.— Շ . . . 12
 Կարմիր մարտիկի յերգը.— Ա. Հովհաննիսյան . . . 17
 Վերացնենք թերութիւնները.— Գ. Գեղորգյան . . . 18
 Դպր. պարագմունքների և դպր. ամեն տեսակ ուսարտադրական աշխատանքի ծանրաբեռնումների նորմալի որինակելի կարգ ու կանոնը . . . 19
 Մալխի 1-ը.— փոխ. Սոֆիկ . . . 23
 Ինչպես էլին տոնում Մալխի 1-ը թագավորի ժամանակ.— Ն. . . 25
 Մալխի մեկը.— Գայանե Բայրիչյան . . . 26
 Կապիտալիստներն «եղեկարական աթոռի» միջոցով են ուզում փրկվել.— Գ. Մ. — յան . . . 27
 Զատիկը մեր տոնը չէ.— Յե. Զախարյան . . . 28
 Տերտերն ու ծանրաշափը.— Իսմայիլ Բեդիլի, փոխ. Յեր. Զ. . . 33
 Հյուսիսային Կովկասի լեռնցիները.— Փոխ. Վ. . . 34
 «Լեռների աշխարհ».— Ն. Պապուկյան . . . 37
 Ճաղարարուծական ֆերման.— գյուղատեսու Գ. Լեվոնյան . . . 40
 Մեր մարմնի կազմութիւնն ու աշխատանքը — կազմեց Լ. Բաշունի . . . 47
 Աշխատանք թիթեղի վրա.— Ո. Բառաշյան . . . 58
 Ինչպես կարել արշավանքի տուրակ.— կազմեց Գ. Զ. Բերուններ.— Ս. Մեքրյան . . . 62



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆԳՐՈՒՄ
Փրգոյան Մ. Զաւարյան Յե. Փիւրումյան Մ.

Խմբագրութեան հասցեն՝ Ростов-Дон., Буде-
новский проспект. 30. Издат. „СЕВЕРНЫЙ
КАВКАЗ“ Армянск. сенция, ПИРУМЯН .

Ответственный редактор
М. Пирумян
Технический редактор
Г. М. Маркарян

№ 2369

У-21

Сд. в набор 2/IV—1932 г.
Сд. в печать 19/IV—1932
Об'ем 4 печ. листа
Тираж 3100 экз

Уполкрайлита № 1393. Газ.-кн. тип. СККПО. Статформат А5 148X210. Заказ № 1792
Гор, Ростов на Дону.

« Ազգային գրադարան



NL0243421


ЖУРНАЛ - УЧЕБНИК
для III и IV групп
армянских школ I ст.

15726

9867

Цена 40 коп.

Арм.
3-5150/2



На армянском языке



И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“
ԳՐԱԳՍԱԶԵՍՏԸ

ՌՈՍՏՈՎ-ՊՈՆ, ՄՈՍԿՈՎԱԿԱՅՈՒ ՓՈՂ., 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՅԵՆՏՐ)